

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆ

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՎ  
ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ - 2002

## Ներածություն

Որևէ իրականություն ըմբռնելու համար հարկավոր է ընդգրկել ամբողջը, իսկ պետական իրականությունը ներկայանում է որպես անցյալից եկող անանձնական ժառանգություն: Պետականագիտական միտքն էլ իր պատմական ընթացքում չի սահմանափակվել անցյալի խորքից եկած դոգմաներով, այլ պատմության ներքին տրամաբանությանը համընթաց զարգացում ապրելով՝ նորանոր դրսևորումներ է ունեցել մարդկային իրականության մեջ: Բոլոր այն իրողությունները, որոնք արդեն իսկ առկա են եղել պետականաշինարարության ընթացքում, իրենց մասնակի արտացոլումն են գտել այսօրվա իրականությունում և, որպես պետականագիտական մտքի առօրեական հանգրվան, կանխորոշում են ապագայի զարգացման միտումները: Երևութական բազմազանության հետ մեկտեղ կարելի է նշմարել բոլոր ժամանակների համար նույնական սկզբունքներ, որոնց հիմքի վրա է կառուցվում տվյալ ժամանակահատվածին հատուկ պետության այս կամ այն մոդելը (կերպը). այդ սկզբունքների սահմանումները, փոփոխվելով գիտության մյուս ոլորտների նվաճումների հետ մեկտեղ, ըստ էության, մնում են ինվարիանտ (տարածության և ժամանակի մեջ անփոփոխ)՝ այսպիսով ապահովելով պետականաշինարարության ընթացքի անխզելիությունը:

Հաշվի առնելով այդ անխզելիությունը՝ ուսումնասիրությունում առաջնորդվել ենք մեզ հասանելի՝ նախկինում կուտակված գիտելիքներով և չհավակնելով վերին ճշմարտության, փորձել ենք դիտարկել պետականությանը առնչվող մոտեցումները նոր տեսանկյունից: Այդ իսկ պատճառով այն բոլոր սահմանումները, որոնք ներկայացված են աշխատությունում, նպատակ ունեն պարզաբանելու, թե այս կամ այն հասկացության տարբերույթ մեկնություններից հատկապես որն է կիրառվել շարադրանքի ընթացքում:

Ուսումնասիրության բոլոր մասերն էլ գտնվում են տրամաբանական փոխկապվածության մեջ և, լրացնելով միմյանց, ներառում են գիտության տարբեր ոլորտներից (էթնոգենեզ, էկզիստենցիալ և համակարգային վերլուծություն, պետականագիտություն, մշակութաբանություն և այլն) այնպիսի հասկացություններ, որոնք եզրաբանական առնչություններ ունենալով հանդերձ՝ մեր կարծիքով, օժանդակ նշանակություն ունեն ազգ-պետություն մոդելի կառուցման ամփոփիչ ծիրում:

Մեթոդաբանական տեսանկյունից նույնպես մոտեցումները բազմաբնույթ են այնպես, ինչպես բազմատեսակ են պետության ըմբռնման պատկերացումներն ու պետական ձևերի բազմազանությունը:

Այնուհանդերձ, պետության ֆենոմենի լիարժեք բացահայտում տեղի չի ունենա, եթե չվերծանվեն այն ընդհանուր և էական սկզբունքներն ու օրինաչափությունները, որոնք ներհատուկ են ժամանակների հոլովությունում պետության արտահայտման ձևերի արտաքին փոփոխություններին:

Չենց այդ սկզբունքների և օրինաչափությունների վերծանման հիմքի վրա է հնարավոր պետության բովանդակության և նրա արտահայտության ձևերի միջև գործող կապերի տրամաբանության ձևակերպումը, որոնց բնույթը, ամեն մի կոնկրետ դեպքում, մեծապես պայմանավորված է մի կողմից՝ ազգի մշակութային ավանդույթներով, մյուս կողմից՝ տվյալ ժամանակահատվածին ներհատուկ քաղաքակրթական ստերեոտիպերով:

Ինչպես և ցանկացած համակարգի էությունը բնորոշվում է նրա բաղկացուցիչ մասերի միջև հաստատված կապերի և հարաբերությունների տրամաբանությամբ, այնպես էլ գիտատեսական համակարգինը պայմանավորված է նրանում արծարծված հայեցակարգային դրույթների միջև սահմանված կապերով: Միայն այս դեպքում է, որ մտքերի թվաբանական գումարը փոխակերպվում է համակարգված տեսության:

Ուսումնասիրությունում ներկայացված դրույթների մեծ մասը վաղուց ի վեր հայտնի է մարդկությանը, սակայն դրանց միջև տրամաբանական կապերի նորացման միջոցով է հնարավոր դառնում դիտարկվող օբյեկտի (պետության) ընկալման եզակիության կայացումը ազգային յուրահատկությունների հիմնախարիսխի վրա:

Այս իմաստով հատկանշական է վերը նշված՝ պետության բովանդակության և նրա արտահայտման ձևերի միջև գործող կապերի ներկայացումը՝ որպես ավանդութային մշակույթի և քաղաքակրթական ստերեոտիպերի միջև առկա փոխհարաբերության արտացոլանք: Նմանօրինակ մոտեցում կիրառելով՝ ուսումնասիրության I և II գլուխներում միմյանցից զատորոշվել են «պետականություն» և «պետություն» հասկացությունները, և դրանց միջև առկա փոխհարաբերության տրամաբանությունից էլ արտածվել են ազգային պետության նպատակային ֆունկցիաները: Այնուհետև, ստացված արդյունքը ենթարկելով Չայ տեսակին հատուկ աշխարհընկալման մոդելով պայմանավորված եզրային պայմաններին, վերծանվել են պետության հայկականությունը ապահովող հիմնարար սկզբունքները:

Աշխատության III գլխում շարադրվել են պետական կառավարման համակարգի բնական օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ինքնուրույն լինելով հանդերձ՝ կիրառական բնույթ են հաղորդում նախորդ գլուխներում արտաբերված սկզբունքներին:

Այսպիսով, հնարավորություն է ընձեռվել պետական համակարգի պայմանականորեն նոր մոդելի սխեմատիկ կառույցի ներկայացման և այդ կառույցի կառավարման համակարգի զարգացման հեռանկարներն ու առաջնահերթությունները պարզաբանելու համար, որով և ամփոփվել է ուսումնասիրությունը:

Ավարտելով ներածական շարադրանքը՝ հարկ է նշել, որ չնայած վերոնշյալ հերթականությանը, աշխատանքը կատարվել է զուգահեռաբար բոլոր երեք ուղղություններով: Դա պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության մեթոդի կառուցման եղանակը և ուսումնասիրմանը ենթակա օբյեկտի դիտարկումը խարսխված են եղել միևնույն տրամաբանությանը, որը բովանդակային իմաստով հանգում է էություն-երևույթ պատճառահետևանքային կապի պահպանմանը (աղ. 1): Չէ՞ որ սերմը պտղի է վերածվում տարածության և ժամանակի մեջ, ծավալվելով ամբողջությամբ, այլ ոչ թե մաս առ մաս և հերթականությամբ: Չետևաբար, խնդիրը ծավալման օրինաչափության պարզաբանման մեջ է, որը համապիտանի լինելով հանդերձ՝ ընկած է նաև մարդկության զարգացման հիմքում: Մարդկության արտաքին պատմությունն էլ մարդու ներքին պատմության տարածաժամանակային ծավալումն է, որը ենթարկվում է այդ նույն օրինաչափությանը, և պետականության ու նրա արտաքին դրսևորման ձևերի հարափոփոխությունը նույնպես սերտաճած է անցած պատմական Ուղու:

Արդ, փոքրը մեծի մեջ է, մեծը՝ փոքրի:

# 1. Հայոց պետականության էությունը

## § 1.1 Պետականության ընկալման հայկական կերպը

Հայկական պետականության էությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է հակիրճ անդրադարձ կատարել տիեզերածնության գաղափարներին: Մասնավորապես, Տիեզերակառույցի մոդելավորման գործընթացն անընդհատորեն գտնվել է մարդկային ստեղծագործ մտքի կիզակետում: Չանդրադառնալով դրա մանրամասներին՝ ընդհանուր գծերով այն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: Ողջ տիեզերքը համարվում է հիերարխիկ կառույց, և այդ կառույցի յուրաքանչյուր մակարդակ բոլոր բնագավառներում ու մասերում կազմակերպվում է միևնույն՝ համապիտանի սկզբունքներին համապատասխան: Մակարդակներից յուրաքանչյուրը ածանցվում է իր նախորդից՝ որպես օբյեկտ, և հանդես է գալիս որպես սուբյեկտ՝ ծնող պատճառ, հիերարխիայի առավել ստորին մակարդակների համար: Ակնհայտ է, որ այդ հիերարխիան քարացած չէ և անընդհատ տրոհվում է տարածության և ժամանակի մեջ՝ ենթարկվելով ծավալման միևնույն սկզբունքին՝ փոքրը մեծի մեջ է, մեծը՝ փոքրի: Այս սկզբունքի տրամաբանությունն այն է, որ հիերարխիայի մակարդակներից յուրաքանչյուրը, ամբողջի մասը լինելով, իր մեջ կրում է ամբողջը՝ որպես ինֆորմացիա: Օրինակ՝ բջիջը, հանդիսանալով կենդանի օրգանիզմի բաղկացուցիչ մասը, իր մեջ բովանդակում է ողջ օրգանիզմը ինֆորմացիայի տեսքով (այստեղից էլ՝ կլոնավորման հնարավորությունը): Հատիկը, լինելով պտղի մասը, միևնույն ժամանակ որպես պոտենցիա կրում է պտղի եռամիասնական կառույցի ամբողջ ինֆորմացիան (այստեղից էլ, երբ սերմը ընկնում է հողին, մեռնելով՝ ծննդյան պատճառ է դառնում նոր պտղի համար՝ իր բոլոր մասերով):

Չնայած ծավալման միևնույն սկզբունքին՝ ժամանակի մեջ հիերարխիայի տարբեր մակարդակներում, տրոհումը ընթանում է ոչ միևնույն արագությամբ: Այսպես, բջիջների տրոհման արագությունը ավելի մեծ է, քան կենդանի օրգանիզմների: Այսինքն, որքան համակարգը բարդանում է, այնքան տրոհման գործընթացները դանդաղում են:

Բոլոր մակարդակներում ծավալման սկզբունքի նույնությունը և տրոհման արագությունների տարբերությունը զուգակցվում է ծավալման միևնույն օրինաչափությամբ: Դրա տրամաբանությունն այն է, որ անկախ

օբյեկտի բարդության աստիճանից, վերջինիս ծավալումի համամասնությունը անընդհատ մնում է նույնը և ենթարկվում յոթի կամ, որ նույնն է, գամմայի օրենքին (այստեղից էլ՝ բնագիտության մեջ հայտնի պահպանման բոլոր օրենքները):

Նկարագրված աբստրահման տեսանկյունից, որը այս կամ այն մանրամասներով և այլաբանություններով հանդերձ, հաճախ կոչում են Տիեզերակարգ, Մարդը՝ դիտարկվում է մետաֆիզիկական հարթության մեջ՝ որպես ինֆորմացիա:

Տիեզերական հիերարխիայում ինֆորմացիոն Մարդը մետաֆիզիկական հարթությունից տրոհվում, դիֆերենցվում է ֆիզիկական-նյութական հարթության մեջ որպես Մարդկային Հասարակության Հիերարխիա՝ ցեղեր (Ռասաներ-սպիտակ, սև, դեղին, կարմիր), ապա՝ Ազգեր, ցեղային միություններ, տոհմեր, ընտանիք, ընդհուպ մինչև՝ մարդ-անհատ:

Յուրաքանչյուր Ազգ, Բնական Տեսակ, ունի ծննդյան իր Պահը և տարածության իրեն հատուկ մասը՝ Արեալը: Արեալի տարածական չափումը հանդես է գալիս որպես Բնական Հայրենիքի նյութական բաղադրիչ, իսկ ժամանակային չափումը՝ որպես Պատմական Ուղի, ինչը հանդիսանում է Բնական Տեսակի ժամանակային մարմինը, որը անընդհատ ծավալվելով՝ դրսևորվում է արտաքին պատմության, պատմական փաստերի տեսքով:

Այսպիսով, ազգերը համամարդկային հանրության որակական բաղադրիչներն են: Նրանցից յուրաքանչյուրին տրված է Աշխարհընկալման իր կերպը, սխեման և այն արտահայտելու խորհրդանիշերի իր և միայն իր համակարգը, ինչն առավել արտահայտված է ազգերի մշակույթներում (լեզու, այբուբեն, ճարտարապետություն, երաժշտություն և այլն): Մշակույթի միջոցով յուրաքանչյուր Ազգ անկրկնելի է իր տեսակի մեջ, և այդ յուրահատկություններով էլ պայմանավորվում է Մարդկային հասարակության ներքին բազմազանությունը:

Ծավալման սկզբունքի համաձայն՝ մասն է ամբողջի և ամբողջը մասի ներքո, հետևաբար համակարգի կենսունակությունը հանգում է ներքին բազմազանության պահպանման խնդրին: Այսինքն, համակարգի ցանկացած մասի, տարրի խնդիրն է իր տեսակին բնորոշ որակական հատկանիշերի՝ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ պահպանությունը մի կողմից, և ամբողջի հետ ներդաշնակվելու պերմանենտ ձգտումը՝ մյուս կողմից:

Այս երկու անհամատեղելի, հակոտնյա մղումների համատեղությունից ծնվում է մշակույթը՝ «Ոգու և մարմնի կռվում ծնված հոգևոր էներգիան

դրսևորվում, մարմնանում է սիմվոլների միջոցով»<sup>1</sup>: Սիմվոլները չեն հորինվում մարդկանց կողմից, այլ՝ հանդիսանում են ենթագիտակցական կայուն ընկալումների (արքետիպեր) արտաքին դրսևորում: Այլ խոսքով, Ազգային խորհրդանիշների համակարգը տեսակի ինքնության ինֆորմացիոն արտահայտությունն է, իսկ մշակույթը՝ այդ ինքնության ծավալման նյութական և աննյութական դրսևորումը:

Պետականությունը, որպես ինքնակազմակերպման հավիտենական զգացում, տրված է յուրաքանչյուր ազգի հոգևոր խավում, և այդպիսով այն բաղադրամասն է աննյութական մշակույթի:

Հետևաբար, մշակույթի հիմնախարիսխը հանդիսացող աշխարհընկալման մոդելով պայմանավորված է նաև ինքնակազմակերպվելու օպտիմալ կերպը:

Խնդրի հետագա պարզաբանման նպատակով մշակութային շերտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայ տեսակի աշխարհընկալման մոդելում առանցքային դեր ունի *Կենտրոնի* գաղափարը: Օրինակ, երաժշտության մեջ հայկական լադի կառուցվածքում ձայնեղանակները, ելնելով կենտրոնի հնչերանգից, շարժվում են միաժամանակ դեպի սուր և թավ հնչերանգներ, այնուհետև մոռից վերադառնում են դեպի Կենտրոն՝ ի տարբերության արևմտյան լադի, որտեղ ձայնեղանակները սկիզբ են առնում ու վերադառնում թավ հնչերանգներ (ինդուկտիվ մտածելակերպ) և արևելյանի, որտեղ սկիզբն ու վերջը սուր հնչերանգներում են (դեդուկտիվ մտածելակերպ):

*Այսպիսով, արմատական բնազդներում տրված ինքնակազմակերպման հավիտենական կերպը՝ Պետականությունը, Հայկական ընկալումներում պատկերանում է Կենտրոնից բխած և դեպի Կենտրոն անդրադարձած (սուբյեկտի օբյեկտիվացում և օբյեկտի սուբյեկտիվացում) պարբերական պրոցեսի իրականացման տեսքով:*

## § 1.2 Պետականություն-Առաքելություն առնչությունը

Տարածության և ժամանակի մեջ տիեզերակառույցի ծավալումն ընթանում է միաժամանակ երկու ուղղություններով՝ ֆիզիկական, նյութական

հարթության մեջ՝ անընդհատ դիֆերենցման, իսկ էության, ինֆորմացիոն մակարդակում՝ ինտեգրման, միասնականության աստիճանի բարձրացման ուղղությամբ: Ակներևաբար, կառույցի և նրա մասերի միջև գործում են երկկողմ հետադարձ կապեր, որոնց հետևանքով հիերարխիայի բոլոր մակարդակներում էլ ծավալման այս երկբևեռ պրոցեսը, որոշակի հապաղումով, իրեն համարժեք դրսևորումներ է ունենում՝ հավասարակշռվելով տվյալ մակարդակի ներքին էներգիայով:

Մասնավորապես, Մարդկային Հանրության հիերարխիայում դիֆերենցման գործընթացը դրսևորվում է ԻՆՔՆՈՒԹՅԱՆ գատորոշման տեսքով, իսկ ինտեգրմանը՝ ինքնությունների բազմազանության ներդաշնակման ձգտումով: Ազգը, որպես՝ Համամարդկային հիերարխիայի բաղադրատարր, ոչ թե մարդկանց թվաքանական գումարն է, այլ մարդ-մարդ փոխհարաբերությունները միջնորդավորող և միայն տվյալ էթնիկ տեսակին տրված արժեքների համակարգով բնորոշվող մեկ ամբողջական օրգանիզմ: Քանի որ արժեքը, որպես կատեգորիա ապագայի հանդեպ ունեցած մտապատկերն է, ապա բնական տեսակի արժեքային համակարգի հիմնախարիսխ է հանդիսանում Նրա մշակույթում դրսևորված աշխարհընկալման մոդելը, մտքի կառուցման Նրան հատուկ կերպը: Հետևաբար, Ազգերի մակարդակում երկբևեռ պրոցեսի հավասարակշռումը տեղի է ունենում աննյութական մշակույթի մասը կազմող Պետականության զգացումով: Այդ պրոցեսի միջոցով Համամարդկային ամբողջի մասը հանդիսացող էթնիկ Տեսակը պահպանում է իր ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ, միևնույն ժամանակ, որպես ինֆորմացիա կրելով ամբողջը, ձգտում է ներդաշնակվել ազգերի բազմազանությամբ:

*Այսպիսով, Պետականության զգացումի միջոցով տիեզերակառույցի ծավալման երկբևեռ պրոցեսի հավասարակշռումը իրենից ներկայացնում է ցանկացած Ազգի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ-ը, որի պերմանենտ իրագործմամբ էլ այն վերածվում է էութենական հավաքականության:*

Այսինքն՝ նկարագրված մեխանիզմը, համամարդկային միջավայրից էթնիկ տեսակը ինքնորոշելու էական միջոց լինելով, միևնույն ժամանակ էթնիկ հավաքականության միասնականությունը պահպանող Ուժ է հանդիսանում: Այս ճանապարհով, համամարդկային ամբողջի մասը հանդիսացող էթնիկ տեսակը սեփական յուրահատկության պահպանման միջոցով կրում է ամբողջն իր մեջ, և որևէ տեսակի աղճատում նշանակում է ինքնության պղծում, հետևաբար և՛ ամբողջի մասը լինելու մերժում:

<sup>1</sup> Կ.Գ.Յունգ, «Մարդը և նրա խորհրդանիշները»

Վերը շարադրված մոտեցումների տեսանկյունից կարելի է եզրակացնել, որ բնական տեսակի առաքելության սահմանումը գոյաբանական (էկզիստենցիալ) առումներով հանգում է պետականության գոյությանը: Իրավամբ, պետականության չգոյությունը նշանակում է երկբևեռ պրոցեսի հավասարկշռող կենտրոնի բացակայություն, ինչը խաթարում է ողջ տիեզերակառույցի օբյեկտիվ ծավալումը՝ վերածելով բնական տեսակը տիեզերակարգի կենսունակությանը սպառնացող քաղցկեղային բջջի, որը ամբողջի կողմից օտարվելով՝ ենթակա է ոչնչացման (այստեղից էլ՝ արտաքին պատմության մեջ հայտնի ազգերի վերացման բացատրությունը):

Յուրահատկություններն ի հայտ են գալիս կոնկրետ Ազգի կողմից ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ գործադրման մեջ, ինչը պայմանավորված է մշակութային շերտերում ամփոփված և աշխարհընկալման մոդելի վրա խարսխված Պետականության ընկալումների տարբերությամբ: Այդ ընկալման Հայկական կերպը (տես §1.1) մեկտեղում է արևմտյան և արևելյան աշխարհընկալման համակարգերը՝ ներկայացնելով երկու տարաբնույթ մոդելների սինթեզ, անհամատեղելի հակոտնյաների միության լավագույն օրինակ: Հետևաբար, Հայոց պետականության էությունը բանաձևային մակարդակում կարելի է ձևակերպել՝ «Ոչ թե արևմուտք կամ արևելք, այլ՝ և՛ արևմուտք, և՛ արևելք» եզրաբանությամբ: Դա ենթադրում է հասարակական կյանքում *Բարոյականության* և *Իրավունքի* ներդաշնակությունն ապահովող փոխհարաբերությունների վավերականացում:

Երկու մակարդակների դրսևորումները, տարաբնույթ լինելով իրենց երևութական վավերականությամբ, գտնվում են անընդհատ հակադրության մեջ, և նրանցից յուրաքանչյուրը բովանդակային առումով կրում է իր հակոտնյային՝ որպես պոտենցիա:

Պատմական ժամանակի մեջ հակադրության այդ բևեռները պարբերաբար փոխվում են իրենց տեղերով՝ մեկը վերածելով մյուսին, և դրանով իսկ պայմանավորում հասարակության մեջ գերակայող ստերեոտիպերի պարբերական փոփոխությունը:

Երևութական դրսևորման մեջ ռացիոնալ-իրավական մակարդակն արտահայտվում է օրենսդրական նորմերի, իսկ իռացիոնալ-բարոյականը՝ էթիկայի կանոնների տեսքով: Հետևաբար այդ երկու մակարդակների ներդաշնակությունը ենթադրում է, որ օրենսդրական նորմերն ու էթիկայի կանոնները պետք է, միմյանց լրացնելով, մեկ միասնական փոխկապակցվածության մեջ գտնվեն: Իրավամբ, էթիկայի ավանդույթը, որպես հոգու փր-

կության անհատական ուղի, սկսել է ձևավորվել դեռևս անտիկ ժամանակաշրջանում, աշխարհակարգի մասին տիեզերաստեղծ գաղափարների շրջանակներում: Այդ իմաստով, մարդու բարոյական դրոնումները մեկնաբանվում են որպես կատարյալ աշխարհակարգի համաչափությունից մարդկային հոգևոր կապերի խզում և այնուհետև նորից վերականգնում:

Հաշվի առնելով վերը շարադրված՝ Պետականության Հայկական ընկալումները՝ մի կողմից և Համամարդկային ամբողջի մասը կազմող էթնիկ տեսակի ինքնության պահպանման սկզբունքը մյուս կողմից՝ հանգում ենք պետականության երեք հիմնարար նպատակների՝ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ, ԺԱՌԱՆԳՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ բովանդակային պարզաբանմանը:

*ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ*-ը ենթադրում է ժամանակից և տարածությունից դուրս գտնվող, հետևաբար՝ դրանց օբյեկտիվ փոփոխություններից անկախ կայունություն: Այսօրինակ մոտեցման դեպքում՝ Ազգի հարատևության ապահովումը, որպես պետական գործառույթ, նշանակում է հոգևոր, գաղափարական և նյութական ուղորտները բնութագրող այն բաղադրիչների պահպանությունը, որոնք կախված չեն ժամանակից (ինվարիանտ են):

*ԺԱՌԱՆԳՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ*-ը ենթադրում է տարածության և ժամանակի մեջ վերը նշված ինվարիանտ բաղադրիչների երևութական դրսևորում, ինչը նշանակում է տվյալ ժամանակահատվածին հատուկ կերպերի բովանդակության հիմքում ինքնությամբ պայմանավորված արժեքների արմատավորում և դրանով իսկ արտաքին ձևի իմաստավորում:

*ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ*-ը ենթադրում է արտաքին անսահման ազդեցությունների դաշտում այնպիսի համարժեք արձագանքման ունակություն, որի արդյունքում չի խաթարվում Տիեզերակառույցի ծավալման երկբևեռ պրոցեսը: Դա նշանակում է ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ բնութագրող բաղադրիչների ներքին բազմազանության պահպանում: Օրինակ՝ լեզվի մակարդակում բարբառները հանդիսանում են վերջինիս որակական բազմազանության բաղադրիչները, հետևաբար դրանցից որևէ մեկի կորուստը կամ աղճատումը հանգեցնում է լեզվական համակարգի որակական աղքատացման, ինչն իր հերթին զրկում է արտաքին արձագանքման հնարավորությունից, քանի որ միօրինակ համակարգը բոլոր ազդեցություններին հակված է արձագանքել միայն մեկ ձևով:

## 2. Հայկական պետության կայացման նախադրյալները

### § 2.1 Պետությունը՝ որպես Պետականության նյութականացում

Նախորդ շարադրանքից պարզ է դառնում, որ էթնիկ տեսակների ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, բոլորի համար նույնը լինելով, ըստ էության, կարելի է սահմանել որպես Տիեզերակառույցի ծավալման երկբևեռ պրոցեսի հավասարակշռման հավիտենական մղում: Տարբերությունները երևան են գալիս միայն կոնկրետ էթնոսի կողմից այդ մղումի իրագործման ընթացքում, երբ, էթնիկ տեսակը բնորոշող բաղադրիչներով՝ ԻՆՔՆՈՒԹՅԱՄԲ, սահմանագծված աշխարհընկալման մոդելին համապատասխան, ազգը իրագործում է իր ինքնակազմակերպման ձգտումը՝ Պետականությունը: Եթե այս մեկնակետից ելնելու պարագայում պետականությունը դիտարկվում էր որպես ինքնակազմակերպվելու զգացում, ապա պետությունը հանդես է գալիս որպես այդ զգացումի իրացում (պրոյեկցիա) ֆիզիկական հարթության մեջ: Ակնհայտ է, որ նմանօրինակ մոտեցման դեպքում պետական կառույցը՝ իր ներքին բաղադրատարրերով և ազգային հանրությամբ՝ հասարակական ինֆրակառուցվածքով պետք է գտնվեն ներդաշնակ փոխմիասնության մեջ: Այսինքն՝ *ֆիզիկական հարթությունում Պետականությունը հանդես է գալիս իբրև՝ մարդ-ընտանիք-հասարակություն-պետություն բազմամիասնության ներդաշնակություն:*

Հայկական աշխարհընկալման ծիրում պետությունը, օժտված լինելով Կենտրոնի դերակատարությամբ, միևնույն ժամանակ հանդիսանում է ներդաշնակ բազմամիասնության անքակտելի բաղադրամաս: Արևմտյան աշխարհընկալման շրջանակներում (աղ.1) պետությունը օժտված է ստորակա նշանակությամբ, իսկ հասարակությունը և մարդը՝ գերակա, ի տարբերություն Արևելյանի, որտեղ մարդն ունի ստորակա նշանակություն, իսկ պետությունը՝ գերակա:

Չնայած այս տարբերություններին, պետության գործառույթները հասարակական կյանքում ներգրավված մյուս կառավարող սուբյեկտների գործառույթներից էականորեն տարբերվում են նրանով, որ դրանք ածանցված են Տիեզերակառույցի երկբևեռ պրոցեսի հավասարակշռման անհրաժեշտությունից և աղերսվում են պետականության զգացումից

բխեցված երեք հիմնարար նպատակներին: Այդ նպատակները մասնակիորեն ամփոփված են նաև հասարակական կյանքում վավերականացված փոխհարաբերություններում, որոնք, որպես կառավարման օբյեկտ, անընդհատորեն գտնվում են պետության նպատակամղված ներազդեցության տակ: Ազգային հանրությամբ, որպես մեկ միասնական օրգանիզմ, օժտված է նույնպիսի եռամիասնական կառույցով, ինչպես և մարդու անհատական էությունը: Այդ կառույցի բաղադրիչներն են՝ հոգևոր, բանական (զառնարակական) և ֆիզիկական (նյութական) մասերը: Հետևաբար, տեսակի պահպանմանն ուղղված երեք հիմնարար նպատակները հավասարապես առնչվում են այդ բաղադրիչներից յուրաքանչյուրին: Այսինքն ստանում ենք ազգային պետության նպատակային ծառը, որը ներկայացված է թիվ 1 գծապատկերում: Հենց այդ բաշխված նպատակների իրացումն էլ հանդիսանում է պետության հիմնական գործառույթը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետության գործառույթների իրագործումը մասնակիորեն ամփոփված է նաև հասարակական կյանքում վավերականացված փոխհարաբերություններում, ստորև կառուցված ենք մարդկային կյանքի այն երեք բնագավառները, որոնք ուղղակիորեն առնչվում են ՀԱՐԱՍԵՎՈՒԹՅԱՆ, ԺԱՌԱՆԳՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ բովանդակային մեկնություններին (տես՝ §1.1) և դրանով իսկ հանդիսանում են պետության առաջնահերթությունները:

**Լեզուն** էթնիկ տեսակը բնորոշող բաղադրիչներից (ինքնության) ամենակարևոր տարրն է, քանի որ այն օժտված է երկակի նշանակությամբ: Համապիտանի խորհրդանիշ լինելուց բացի, այն նաև ներազգային հաղորդակցության մջջոց է: Համաձայն մարդաբան Ուորդ Գուենաուի՝ մշակույթը բաղկացած է չորս տարրերից, որոնցից առաջինը հասկացությունները կամ հայեցակետերն են, և դրանք առաջին հերթին ամփոփված են լեզվի մեջ: Այդ հասկացությունների շնորհիվ միևնույն էթնիկ խմբի ներկայացուցիչների գիտակցական ու ենթագիտակցական փորձը կարգավորվելով ձեռք է բերում որոշակի կոհերենտություն: Այսպիսով, մայրենի լեզվի ուսումնասիրությունը ոչ միայն հնարավորություն է ընձեռում մարդուն կողմնորոշվելու շրջապատող աշխարհում, այլ նաև թույլ է տալիս հաղորդակցական տարածությունում տարբերելու «յուրայիններին»: Այս իմաստով, կարելի է պնդել, որ լեզուն իրենից ներկայացնում է էթնիկ գործառույթային խորհրդանշային միջավայրի հիմնախարիսխը, հետևաբար և՛ էթ-

նիկ նույնացման ճանապարհով այն ձևավորում է ազգային ինքնագիտակցությունը:

Վերոշարադրյալը պետականության հիմնարար նպատակների բովանդակության հետ բաղդատելիս ակնառու է դառնում տեսակի ՀԱՐԱՏԱՆԻԹՅԱՆ ապահովման շրջանակներում մայրենի լեզվի և նրա ներքին բազմազանության պահպանման առաջնահերթությունը:

**Կրթությունը** արտաքին հարափոփոխ ձևերի մեջ ներքին անփոփոխ մեծությունների ճանաչման և ժառանգման կարևորագույն մջջոց է: Համաձայն Պլատոնի՝ կատարյալ պետության իրողությունը հիմնված է բարոյական ռացիոնալիզմի վրա: Ըստ այդմ, որպեսզի այն կազմակերպվի համաչափության օրենքների համապատասխանությամբ, անհրաժեշտ է մարդուն լուսավորել և դաստիարակել Արարչակերպ տիեզերաստեղծման օրենքներին համապատասխան (խորհրդագործական փոխհաղորդում): Ինչպես Պլատոնն ինքն է գրում՝ «Կատարյալ պետությանն առաջադրվող պահանջները թվում են չափից դուրս մեծ և անիրական, եթե չի գիտակցվում, որ անհրաժեշտ է լուծել միակ մեծ և բավարար խնդիրը՝ Կրթության և Դաստիարակության»: Այլ խոսքով՝ եթե հայտնի են արդարության և ներդաշնակության օրենքները, ապա սոցիալական կյանքում դրանց վերարտադրությունը հնարավոր է իրականացնել ճշմարիտ դաստիարակության շնորհիվ:

Այսպիսով, կրթությունը ոչ միայն գիտելիքների պաշարը մեծացնելու միջոց է, այլ նաև երևույթների արտաքին ձևերի և կերպերի իմաստավորման հմտություն, որը խարսխված է ավանդության մշակույթի վրա: Հետևաբար, կրթությունը, որպես համակարգ, Պետականության հիմնարար նպատակներից ԺԱՌԱՆԳՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ապահովման առաջնահերթությունն է:

**Մշակույթը**, հանդիսանալով էթնիկ տեսակի ինքնության ժավալման նյութական և աննյութական դրսևորումը, ներկայացնում է ազգային էության ինֆորմացիոն արտահայտությունը: Այն ներառելով թե՛ լեզուն և թե՛ կրթությունը՝ էթնոսի ձևավորման ընթացքում ձեռք է բերում համակարգաստեղծ նշանակություն: Ելնելով այն հանգամանքից, որ կամայական սոցիալական համակարգի (այդ թվում էթնիկ) անվտանգությունը ենթադրում է արտաքին անսահման ազդեցությունների պարագայում համակարգաստեղծ կապերի պահպանում, ապա Պետականության նպատակներից

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ տեսանկյունից, մշակույթը և նրա անաղարտության ապահովումը, առանցքային նշանակություն ունենալով հանդիսանում են պետության երրորդ առաջնահերթությունը:

## § 2.2 Պետության կառուցվածքաբանությունը

Ինչպես արդեն նկատվել էր, տիեզերակառույցի ժավալման երկբևեռ պրոցեսն իր անդրադարձն է ունենում մարդկային կյանքի բոլոր բնագավառներում (աղ. 1), որի արդյունքում նյութական հարթության մեջ տեղի է ունենում ձևերի և կերպերի անընդհատ տրոհում՝ զուգակցվելով ներքին բազմազանության աճով, իսկ էության (ինֆորմացիոն) հարթությունում առկա է միասնականության աստիճանի բարձրացում: Ակներևաբար, այս պրոցեսը դրսևորվում է նաև էթնիկ տեսակների ինքնակազմակերպման ողջ ընթացքում: Մասնավորապես, Պետականության (ինֆորմացիոն) հարթության մեջ ինտեգրման աճը դրսևորվում է ավանդության մշակույթի ինվարիանտությամբ, իսկ պետության (նյութական) հարթությունում քաղաքակրթական ստերեոտիպերով պայմանավորված կառավարման ձևերի, իշխանության ձևավորման եղանակների և պետական կառավարման սուբյեկտների բազմազանության աճով:

Որպեսզի ներկայացվեն պետության մեխանիկական կառույցի և այդ կառույցի հիմքում ընկած արժեքների համակարգի համապատասխանելիության հաստատման եղանակները, անհրաժեշտ է քաղաքակրթական ստերեոտիպերի տեսանկյունից դիտարկել պետության սոցիալական բնույթը:

Այդ իմաստով, պետությունը դիտարկվում է քաղաքական կազմակերպվածության և իշխանության ձևավորման տեսակետից: Հանրապետական կացութաձևի որդեգրումն առնչվում է նաև իրավական պետության սահմանումներին, որոնք հանգում են իշխանության երեք թևերի տարանջատման սկզբունքին: Ենթադրվում է, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների՝ հարաբերականորեն անկախ գործառնությունը հիմք է հանդիսանում հակակշիռների մեխանիզմի որդեգրման և, վերջինիս միջոցով, ներպետական կյանքում հավասարակշռված քաղաքականության իրագործման համար: Մյուս կողմից՝ պետությունը, որպես ազգի ինքնակազմակերպման լավագույն միջոց, օժտված է համապիտանի (ունիվեր-



սալ) գործառույթներով, որոնց իրագործման համար անհրաժեշտ է վարել նպատակամղված և միասնական քաղաքականություն, ինչը և ենթադրում է իշխանության երեք թևերի ներդաշնակ փոխմիասնություն: Ներդաշնակ փոխմիասնության կայացումը տարանջատման պայմաններում սկզբունքորեն հնարավոր է, եթե՝

1. քաղաքական որոշումների կայացման ինստիտուտը (որն է՝ հանրապետական կարգերի պարագայում ժողովրդի ազատ կամարտահայտությանը ձևավորված քաղաքական իշխանությունը և այդ իշխանության կողմից ուղղակիորեն նշանակված բարձրագույն պաշտոնները) սահմանազատված է քաղաքական որոշումները նախապատրաստող և արդեն իսկ կայացված որոշումների իրագործումը ապահովող ինստիտուտից (որն է՝ պետական ծառայության համակարգը),

2. քաղաքական իշխանության երեք թևերի կենսունակությունն ապահովող պետաժողովրդական ապարատները միասնական են, այսինքն՝ կազմում են մեկ ամբողջական և քաղաքական իշխանությունների ամբիջական ազդեցությունից դուրս գտնվող կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս:

Առաջին նախադրյալի էությունն այն է, որ քաղաքական կոնյունկտուրայի փոփոխությունը չպետք է հանգեցնի պետական ապարատը դրսևորող մասնագիտական կորպուսի փոփոխության: Սա, իր հերթին, կբերի այն բանին, որ ներքաղաքական համակարգի մասը կազմող միավորները կառաջնորդվեն իրենց իսկ կողմից հռչակված գաղափարներով և ծրագրերով:

Երկրորդ նախադրյալի էությունը պետության համապիտանի գործառույթների իրագործման համար անհրաժեշտ մոնոլիտ և միասնական կառավարման ենթակա պետական ծառայության համակարգի առկայությունն է: Դա նաև նշանակում է քաղաքական իշխանության բարձրագույն պաշտոնյաների կամայականություններից զերծ և օրենսդրությամբ կանոնակարգվող կադրային քաղաքականության իրագործում: Ընդ որում, որքան կարևոր է քաղաքական իշխանությունների հանդեպ հասարակության վստահությունը, նույնքան կարևոր է պետական ծառայության լեզվատիրությունը: Հետևաբար, կադրային քաղաքականության իրագործումը պետք է խարսխված լինի հրապարակայնության և քաղաքացիների համար հավասար մատչելիության սկզբունքների վրա:

Ամփոփելով վերը շարադրված երկու նախադրյալները՝ կարելի է ձևակերպել ներդաշնակ և արդյունավետ պետական կառավարման համակարգի սկզբունքային եզրերից մեկը՝ բանաձևային մակարդակով՝ **ապակենտրոն քաղաքական իշխանություն և կենտրոնացված պետական ծառայություն:**

Այս բանաձևի շրջանակներում, ապակենտրոն քաղաքական իշխանության պայմաններում, վերջինից սահմանազատված, կենտրոնացված պետական ծառայության կազմակերպումը ենթադրում է պետական ապարատի ապաքաղաքականացվածություն, իսկ որոշ դեպքերում՝ նաև ապակուսակցականացվածություն: Ակնհայտ է, որ այս բանաձևը իմաստավորվում է, նաև Հայկական աշխարհընկալման մոդելի տեսանկյունից (տես § 1.1): Իրավամբ, համապետական քաղաքական որոշումները նախապատրաստվում են պետական ապարատի կողմից (առաքում *Կենտրոնից*), որոշումները կայացվում են քաղաքական իշխանությունների կողմից (առաքվածի անդրադարձ), կայացված որոշումները իրագործվում են նորից պետական ապարատի կողմից (վերադարձ *Կենտրոնից*):

Վերը շարադրված նույն բանաձևը հնարավոր է դարձնում քաղաքակրթական ստերեոտիպերի շրջանակներում պարզաբանել պետական իշխանության շարունակականության ապահովման ինստիտուցիոնալ համակարգի բնույթը:

Տարբեր ժամանակներում այս խնդիրը լուծվել է տարբեր եղանակներով: Եզիպտոսում փարավոնները երկրի վրա աշխարհիկ իշխանությունը մարմնավորող Աստծո փոխանորդ դառնալուց առաջ դաստիարակվում և իրենց օծումն էին ստանում բուրգերում՝ հոգևոր իշխանությունը մարմնավորող քրմական կաստայի կողմից: Արքայական դինաստիաների ժամանակաշրջանում արքան գահին էր բազմում հոգևոր իշխանությունը մարմնավորող պատրիարքի օծումից հետո միայն: Բուլճարիկյան ժամանակաշրջանում քաղքյուրոյի որոշումները կայացվում էին կենտկոմի իդեոլոգիայի բաժնի համաձայնությամբ:

Բերված բոլոր օրինակներում կարելի է նշմարել մեկ ընդհանուր օրինաչափություն, որը բնորոշվում է աշխարհիկ իշխանության և հոգևոր-գաղափարական արժեքները կրող հաստատությունների միջև գոյություն ունեցող հիերարխիկ կապերով: Ընդ որում, այդ իրողությունը խարսխված է եղել մարդկային փոխհարաբերություններում պետության դերի այն ըն-

կալումների վրա, որոնք ներհատուկ են եղել տվյալ պատմական ժամանակահատվածին և, չնայած դրսևորման մեջ առկա տարբերություններին, հիմնական նպատակը եղել է պետական իշխանության շարունակականության ապահովումը:

Վերադառնալով այսօրվա քաղաքական համակարգում հավասարակշռող բարոյաիրավական ինտեգրող թեզի բացահայտման խնդրին, հաշվի առնելով մեզանում առկա պետականության ընկալումները, կարելի է արձանագրել, որ այն հանգում է *Օրենքի գերակայության* գաղափարին: Իրավունքի տեսությունից հայտնի է, որ իրավական նորմի սանկցիայի մասով բնորոշված պատժաչափի խստությունը բնավ չի կարող հանգեցնել օրենքի հանդեպ հարգանքի մեծացմանը: Կոնֆուցիոսը լավագույն կառավարումը հնարավոր էր համարում ոչ օրենքների ու հարկադրանքի միջոցով արտաքին փոխհարաբերությունները փոխելու ճանապարհով, այլ այն դեպքում, երբ մարդիկ, ու առաջին հերթին կառավարողները, իրենք իրենց գոհացում են տալիս. «Ինքն իրեն դաստիարակել և արդարության վերադառնալ. սա էլ հենց մարդկությունն է»: Յետևաբար, այս գաղափարը բացառապես բարոյական արժեք է, քանի որ հնարավոր չէ գրել «Օրենքը հարգելու մասին» օրենք և չկա այնպիսի մի իրավական նորմ, որով հնարավոր կլիներ պարտադրել պետական ծառայողին հարգել օրենքը: Ասել է թե՛ օրենքի ուժ պետք է ստանան ոչ թե վարքի կանոնները, այլ վարքականոնի առկայությունը ընդհանրապես: Ակներևաբար, բարոյական նորմերի իրագործումը պետածառայական համակարգում չի կարող հիմնված լինել վարչական մեթոդների վրա: Դրա համար անհրաժեշտ են այնպիսի նոր կառույցներ, ինչպիսիք են՝ էթիկայի հանձնաժողովները, պատվի դատարանները և այլն: Կառույցներ, որոնց գործունեության միակ երաշխիքը օրենքի նախագծում ամրագրված քաղաքացիական ծառայողների երդումն է, իսկ ներազդեցության լծակների դերում հանդես են գալիս հասարակական խրախուսման և պարսավանքի միջոցները (այս խնդիրներին առավել մանրամասն անդրադարձել ենք §3.3-ում):

### 3. Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարներն ու առաջնահերթությունները

Պետությունը, որպես համակարգ, օժտված է բազմաբնույթ գործառույթներով, որոնց դասակարգման արդյունքում ստանում ենք համակարգի ֆունկցիոնալ ծառը: Ակնհայտ է, որ կառավարումը, այդ գործառույթներից մեկը լինելով, հիմնված է ինչպես համապիտանի (ունիվերսալ), այնպես էլ՝ յուրահատուկ սկզբունքների վրա: Սահմանելով այն որպես կառավարող սուբյեկտի կողմից կառավարվող օբյեկտի նկատմամբ կիրառվող անընդհատ ազդեցություն, որի նպատակն է օբյեկտի վիճակը բնութագրող պարամետրերի փոփոխության շնորհիվ այն դեպի ցանկալի վիճակի մղելը՝ հանգում ենք կառավարման գործառույթի հետևյալ համապիտանի սկզբունքներին՝

1. նպատակի վեկտորի ընտրություն,
2. կառավարվող օբյեկտի վիճակը բնութագրող պարամետրերի ճանաչողություն,
3. դրանց գերակայությունների պարզաբանում և կառավարման ենթակա պարամետրերի ու նրանց էտալոնային արժեքների ընտրություն,
4. կառավարման ալգորիթմի ընտրություն:

Պետական կառավարման այս համապիտանի սկզբունքները դիտարկելով որպես ազգ-պետություն համակարգի նպատակային ծառում ընդգրկված ենթանպատակների անընդհատ իրագործման միջոց՝ կստանանք պետության չորս հիմնական գործառույթների՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական և գաղափարական, փոխկապվածության և համամասնության կարգը: Քանի որ թվարկված գործառույթները գտնվում են օրգանական միասնության մեջ, ապա նրանցից որևէ մեկի գերակայությունը հանգեցնում է պետական կառավարման համակարգի այլասերմանը: Մասնավորապես՝

- ա) տնտեսական բաղադրիչի գերակայության դեպքում՝ պետական իշխանության միակ խնդիրը հանգում է նյութական հարստության բաշխման և վերաբաշխման իրագործմանը, որի արդյունքում ազգային հանրույթը աստիճանաբար վերածվում է անդեն սպառողական հասարակության,
- բ) սոցիալական բաղադրիչի գերակայության պարագայում պետական

իշխանությունը, սևեռվելով հանրային ծառայությունների մատուցման որակը բարելավելու խնդրի վրա, աստիճանաբար օտարվում է հասարակությունից և զրկվում որևէ կարգավորիչ դերակատարումից,

գ) քաղաքական բաղադրիչի գերակայության դեպքում պետական կառավարման համակարգը, իշխանությունը պահպանելու նպատակով, ձգտում է կարգավորել դասերի, ճնշման խմբերի և սոցիալական խավերի փոխհարաբերությունները՝ արդյունքում այն դառնում է ինքնանպատակ,

դ) գաղափարական բաղադրիչի գերակայության դեպքում պետական իշխանությունը նպաստում է մշակութային ժառանգության որակական բազմազանության մաքսիմալ ժխտմանը, ինչն իր հերթին բերում է համակարգաստեղծ կապերի խզմանը, իսկ արդյունքում հասարակությունը դառնում է անկայուն ու ենթակա արտաքին ազդեցություններին, և պետական իշխանությունը վերածվում է անբողջատիրության այս կամ այն տարատեսակին:

Մյուս կողմից՝ վերոհիշյալ գործառույթներից յուրաքանչյուրն ունի իր սեփական ներքին տրամաբանությունը և իրագործման համար անհրաժեշտ կազմակերպման յուրահատուկ միջոցները: Այդ միջոցները խարսխված են պետական կառավարման բնական օրենքների և սկզբունքների վրա, որոնք վերհանված են սոցիալական կառավարման համապիտանի օրինաչափություններից:

### *§3.1 Պետական կառավարման բնական օրենքներն ու օրինաչափությունները*

Պետական կառավարումը, իբրև նպատակամղված գործունեություն, հանդես է գալիս որպես հասարակական կյանքի վերնաշերտ և բնորոշվում վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միևնույն ժամանակ պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն ինֆորմացիոն բնույթ:

Կառավարման ընթացքում սուբյեկտիվ գործոնը սերտաճում է օբյեկտիվ գործոններին, կառավարման ներքին տրամաբանությունը՝ կառավարվող օբյեկտի փոփոխության և գործունեության տրամաբանությանը: Այս դիալեկտիկայի էությունը սուբյեկտի օբյեկտիվացումն ու օբյեկտի սուբյեկտիվացումն է:

Կառավարման օրենքները, ի տարբերություն իրավական օրենքների, որոնցով բնորոշվում են հասարակական իրավահարաբերությունները, նկարագրում են ամբողջական պետական մեքենայի և նրա կառավարման մարմինների, կառավարող համակարգի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև առկա այն ընդհանուր փոխհարաբերությունները, որոնք, ունենալով անհրաժեշտ, կրկնվող և էական բնույթ, տրվում են գիտատեսական մեկնության: Պետական կառավարման օբյեկտիվ օրենքների համապատասխանելիությունը իրական կյանքին չափորոշվում է կառավարչական հարաբերություններում սուբյեկտի բազմազան գործողություններով դրսևորված այն էականորեն նշանակալի արդյունքներով, որոնք օժտված են պարբերական կրկնությամբ:

Սոցիալական միջավայրի վիճակից, այդ թվում՝ հասարակական համակարգի կառուցվածքից կախվածության մեջ գտնվող կառավարչական պրոցեսի վերլուծությունը, ինֆորմացիոն մոտեցման հետևողական կիրառման դեպքում, հանգեցնում է պետական կառավարման կառուցվածքային և գործառույթային յուրահատուկ օրենքների բացահայտմանը, որոնք կշարադրվեն ստորև:

#### **I Օրենք. Սուբյեկտի օբյեկտիվացում և օբյեկտի սուբյեկտիվացում**

Այս օրենքը մեկնաբանվում է սոցիալական կառավարման ընդհանուր օրենքի յուրատեսակ ձևակերպմամբ, որի էությունը դեկլարող համակարգի վիճակից և արտաքին միջավայրից, կառավարող ներազդեցության կախվածությունն է: Այլ խոսքով, դա՝ սուբյեկտի կողմից օբյեկտի վրա կիրառվող կառավարչական ազդեցության կախվածությունն է սոցիալական միջավայրից և պետական կառավարման համակարգի վիճակից: Ընդ որում՝ օբյեկտի սոցիալական վիճակը ոչ թե մեխանիկորեն է արտացոլվում կառավարող սուբյեկտի գործունեությունում, այլ վերամշակվում և տրանսֆորմացվում է այն կուտակված ինֆորմացիայի և կառավարչական փորձի ծավալներին համապատասխան, որոնց տիրապետում են կառավարման կառույցները:

#### **II Օրենք. Կառավարման և կարգավորման ուժեղացում**

Հասարակական կյանքի և պետական հաստատությունների բազմա-

զանության աճը անխուսափելիորեն հանգեցրել է հասարակական գործընթացների կառավարման և կարգավորման ուժեղացման անհրաժեշտությանը: Սոցիալական կառավարման տեսությունում այս միտումը դիտարկվում է որպես սոցիալական կառավարման ընդհանուր օրենք: Բանն այն է, որ պետական կառավարման, որպես համակարգային-ինտեգրված գործունեության, կատարելագործման օբյեկտիվ անհրաժեշտությունը ծագում է շնորհիվ այն խնդիրների բարդացման և գործոնների ավելացման, որոնք ներառվում են ռազմավարական և այլ պետական նշանակություն ունեցող որոշումների մշակման և ընդունման վրա:

### **III Օրենք. Անհրաժեշտ բազմազանության ապահովում**

Այս օրենքով բնորոշվում է հասարակության վրա կառավարչական ազդեցության օբյեկտիվ սահմանները: Բազմազանությունը, որպես հասկացություն, ունի ինֆորմացիոն բնույթ: Մյուս կողմից՝ այն նաև բնութագրում է իրերի միջև առկա օբյեկտիվ զանազանությունը: Երբ պետական կառավարման նպատակամղվածությունը տարբերվում է կառավարվողների նպատակներից, վերջիններս կամ հախուռն կերպով սկսում են դիմակայել պետական որոշումներին, կամ էլ դիմում են «ստվերային համակերպման (ադապտացիայի)» (օր.՝ ստվերային տնտեսությունը):

III.1- Անհրաժեշտ բազմազանության օրենքի համատեքստում, խոսելով կառավարման և ինքնակառավարման հարաբերակցության մասին, հարկ է նկատի ունենալ այդ հարաբերակցության դրական կողմերը: Այսինքն՝ այն դրսևորումները, որոնք ձևավորվում են կառավարող սուբյեկտի նպատակների դաշտում:

III.2- Նույն օրենքը մեկնաբանվում է նաև որպես կառավարման հիերարխիկ կառուցվածքի հիմնավորում: Այս դեպքում ելակետային է համարվում այն փաստը, որ կամայական սուբյեկտի կողմից վերանշակվող և վերարտադրվող ինֆորմացիայի ներքին բազմազանության ծավալները սահմանափակ են: Հետևաբար, բացառվում է մեկ մարմնի կողմից հասարակության կառավարման բոլոր լիազորությունների կենտրոնացման հնարավորությունը: Այդ պատճառով էլ ծագում է կենտրոնական մարմնից ստորին մակարդակներին լիազորությունների պատվիրակման անհրաժեշտությունը:

### **IV Օրենք. Իշխանությունների տարանջատում**

Պետականաշինարարության պատմության մեջ ձևավորված իշխանության ճյուղերի տարանջատումը (օրենսդիր, գործադիր և դատական) և դրանց համապատասխանորեն կառավարող սուբյեկտների նույնացումը (կառավարման կենտրոններ) դարձել է պետական իշխանության գործառնության համընդհանուր ձև, որը ժողովրդավարական պետություններում հանդես է գալիս տարբեր դրսևորումներով: Այսինքն, այս մոտեցումը վերածվել է օբյեկտիվ օրինաչափության, որը կարելի է ձևակերպել որպես՝ *կառավարման և իշխանության կենտրոնների ապակենտրոնացման մասին օրենք*:

Դա նշանակում է.

- Ուղղահայաց և հորիզոնական կառավարման մեջ անհրաժեշտ է ձևական և իրական դրսևորումներում տարանջատել պետական իշխանության գործառնություններն ըստ իշխանության հարաբերականորեն ինքնուրույն ճյուղերի և մակարդակների, որոնք պետք է իրականացվեն միմիանցից անկախ և տարբեր հաստատությունների միջոցով: Ընդ որում, ճյուղերից մեկը, որը անուղղակիորեն ներկայացնում է ընտրողների հանրությոնը և հանդես է գալիս որպես կոլեկտիվ մարմին, կարող է վերահսկել մյուս ճյուղերը: Տարբեր մակարդակներում՝ կենտրոնական, տարածքային և տեղական ինքնակառավարման, իշխանությունները տարանջատվում են ըստ լիազորությունների և վարույթների:

- Պահանջվում է իշխանությունների փոխադարձ սահմանափակում և փոխադարձ վերահսկողություն, այդ թվում՝ ներկայացուցչական իշխանության վերահսկող գործառնության իրագործման ոլորտում: Այլ խոսքով, հարկ է հակակշիռների մեխանիզմի կիրառման միջոցով վարել հավասարակշռված քաղաքականություն (այս թեզը առաջին անգամ ամրագրվել է ԱՄՆ Սահմանադրությունում):

- Անհրաժեշտ է ապահովել իշխանությունների հավասարակշռություն, որպեսզի իշխանության ճյուղերից և ոչ մեկը, բոլոր առումներով, չգերակշռի մյուսների նկատմամբ և ազատված չլինի օրենքի առջև պատասխանատվությունից: Պետական-վարչական կառավարման մեջ գործադիր իշխանության առավելությունը պետք է սահմանափակվի ներկայացուցչական իշխանության օրենսդիր և վերահսկողական գործառնությունով, ինչպես նաև դատական իշխանության գործունեությամբ:

**V Օրենք. Պետական կառավարման համակարգային կազմակերպում**

Քաղաքականության պատմությունը հանգեցրել է նաև պետական կառավարման այնպիսի անհրաժեշտ և համընդհանուր կազմակերպման ձևի, ինչպիսին է նրա համակարգային բնույթը: Համակարգային կազմակերպման ձևը հանդիսանում է պետական կառավարման օբյեկտիվ օրենքներից մեկը: Պետական կառավարման գործառնությունը և վերջինիս առջև օբյեկտիվորեն ծառայած խնդիրների վճռումը կրում է ամբողջական և միասնական բնույթ, ինչը պայմանավորված է նրա տարրերի և պրոցեսների փոխմիասնականությամբ: Այսպիսով, համակարգայնությունը հանդիսանում է պետական կառավարման, որպես հաստատության, անհրաժեշտ կենսակերպը:

Պետական կառավարման համակարգայնության օրենքը իր արտացոլումն է ստանում կառավարման գործընթացների և տարրերի միջև առկա էական կապերում: Որպես այդպիսիք, կարելի է առանձնացնել՝

ա) Կառավարման հիմնական գործառնությունների միասնությունը պետական կառավարման բոլոր հարթություններում: Դրանք են՝ նպատակադրումը, կանխագուշակումն ու պլանավորումը, տեղեկատվայնությունը, կազմակերպումը, կորդինացումն ու կարգավորումը, ակտիվացումը, վերահսկողությունը և վերջնական արդյունքների ընդհանրացումն ու գնահատումը (էֆեկտիվությունը): Գործառնությունների միասնությունը պայմանավորում է հաջորդական փուլերից կազմված կառավարման պրոցես: Փուլերի բովանդակությունը կազմված է մեկ կամ մի քանի գործառնությունների միաժամանակյա իրագործումից (օր.՝ պլանավորում և տեղեկատվություն): Գործառնությունների ներքին փոխկապվածությունը պայմանավորված է բուն կառավարման գործառնության ռացիոնալ բնույթով և կառավարման հիմքում ընկած՝ համակարգաստեղծ քաղաքական և նորմատիվ-արժեքային բաղադրիչներով:

բ) Պետական կառավարման մակարդակների միասնությունը նշանակում է կենտրոնական, տարածքային և տեղական մակարդակներում պետական կառավարման և ինքնակառավարման փոխլրացում, ինչպես նաև ուղղահայաց և հորիզոնական մակարդակներում՝ տարանջատված կառավարման կենտրոն-սուբյեկտների փոխազդեցություն մեկ միասնական պրոցեսում:

գ) Պետական կառավարման ընդհանուր և մասնակի ենթահամակար-

գերի միասնությունը, քանի որ վերջիններս կառուցվում են համապետական հիմունքներով և հանդես են գալիս որպես կենսագործունեության առանձին ոլորտներում համապետական նպատակների կոնկրետ իրագործում:

**VI Օրենք. Պետական կառավարման ինքնազարգացման ապահովում**

Եթե նախորդ օրենքը բնութագրում էր պետական կառավարման համակարգայնությունը իդեալական դեպքում, ապա այս օրենքը ենթադրում է համակարգի էվոլյուցիան, որն ուղղված է համակարգի լրիվության պահպանմանը, նրա էության իրացմանը, համակարգում օբյեկտիվորեն առկա հնարավորությունների և պոտենցիալի իրագործմանը:

Համակարգի ձգտումը ամբողջական վիճակին ենթադրում է, որ՝  
ա) ազդեցության ոլորտում պետք է ներառվեն պետական կյանքի բոլոր այն պրոցեսները, որոնք ունեն սոցիալական արժեք,

բ) ապահովվեն կառավարման միասնական և միմիանց հետ փոխկապված գործառնությունների իրագործման հնարավոր օպտիմալ լրիվությունը, ինչպես նաև կառավարչական գործունեության մեջ իշխանության տարբեր ճյուղերը և կենտրոնները ներկայացնող սուբյեկտների նպատակամղվածության միասնականությունը,

գ) վերացվեն համակարգի մասը կազմող տարրերի միջև առկա այն հակասությունները, որոնք խոչընդոտում են ամբողջի նորմալ կենսունակությանը,

դ) ստեղծվեն անհրաժեշտ մարմինները, հաստատությունները և նորմերը:

**§3.2 Պետական կառավարման ընդհանուր-համակարգային և մեթոդաբանական սկզբունքները**

Գիտության մեջ սկզբունքներ են կոչվում այն ընդհանուր դրույթները, որոնց օգնությամբ բացատրվում են վերլուծվող երևույթները, և ի վերջո կառուցվում է ամբողջ տեսությունը: Օբյեկտիվ օրենքները համապատասխանորեն արտացոլող պետական կառավարման սկզբունքները անկախ են սուբյեկտի գիտակցությունից և կամքից, պետության և հասարակու-

թյան պահանջմունքներից: Դրանք ճանաչվում և ձևակերպվում են տարբեր ընդունակությունների և ունակությունների տեր մարդկանց կողմից: Այսպիսով, պետական կառավարման սկզբունքների էությունը հասարակական-քաղաքական հարաբերությունների յուրահատկությունից և օբյեկտիվ օրենքներից բխող պահանջների սւբյեկտիվ արտահայտության մեջ է:

**Սկզբունք 1 (գլխավոր սկզբունք) Պետական քաղաքականության գերակայության սկզբունք**

Այս սկզբունքը պատկանում է պետական կառավարման ընդհանուր մեթոդաբանական սկզբունքների թվին, համաձայն որի՝ պետական կառավարման մեջ քաղաքականության գերակայությունը այն ինտեգրող մջջոցն է, որը, սոսնձելով կառավարչական հարաբերությունների և կառավարման գործընթացի տարրերը, վերջիններիս հաղորդում է պետական նշանակություն և իմաստավորում նպատակադրումն ու նպատակամղվածությունը:

**Սկզբունք 2 Օբյեկտիվության սկզբունք**

Այս սկզբունքը պետական կառավարման համակարգում հիմնականներից մեկն է, քանի որ կառավարման համակարգը նախևառաջ ինֆորմացիոն համակարգ է, ապա՝ նրա գործունեությունը մեծապես կախված է կառավարող սուբյեկտի կողմից տիրապետվող ինֆորմացիայից: Կառավարել պետությունը և հասարակությունը՝ կնշանակի գործել՝ տիրապետելով հավաստի և օբյեկտիվ ինֆորմացիայի:

**Սկզբունք 3 Էնթրոպիայի տնտեսման սկզբունք**

Այս սկզբունքը պետական կառավարման ընդհանուր մեթոդաբանական սկզբունքներից մեկն է, քանի որ ինֆորմացիոն պրոցեսները կառավարման կարևորագույն կողմերից են, և ինֆորմացիայի որակից է կախված կառավարման գործունակությունը:

Էնթրոպիա հասկացությունը բնութագրում է անորոշության չափը, և որքան փոքր է այն, այնքան ավելի բարձր է հասարակական համակարգի կարգավորվածության աստիճանը:

Այս սկզբունքից ելնելով՝ կառավարող սուբյեկտը պետք է ընտրի նե-

րազդեցության այն ձևն ու մեթոդը որի կիրառությունը հանգեցնում է կառավարվող օբյեկտի նվազագույն քայքայմանը և ռեսուրսների ու էներգիայի ոչ դարձելի փոքրագույն կորուստների: Այսինքն, էնթրոպիայի քանակության միմիմալության պահպանումը ապահովում է տնտեսական, նյութատեխնիկական ռեսուրսների, ինչպես նաև, ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործում: Եվ սա ակնհայտ է, քանի որ պետական կառավարման մակարդակի մասին դատում են ինչպես առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման աստիճանով, այնպես էլ՝ սոցիալական կոնստրուկտիվ գործունեության պրոցեսներում, գիտության և պրակտիկայի կողմից բացահայտված նորությունների կիրառությամբ: Օրինակ՝ իշխանության ապակենտրոնացումը հանգեցնում է կառավարման նոր մեթոդների և ինֆորմացիոն ռեսուրսների փնտրտություններին ու վերջիններիս ներգրավմանը կառավարման գործընթացներում:

**Սկզբունք 4 Փոքրագույն գործողության սկզբունք**

Այս սկզբունքի էությունը տարածության և ժամանակի մեջ նախորդ սկզբունքի հետևողական իրագործման մեջ է: Եթե էնթրոպիայի տնտեսման սկզբունքը պահանջում էր կառավարող սուբյեկտի կողմից էնթրոպիայի միմիմալությունը պահպանելու նպատակով որոշակի մեթոդների կիրառությունը՝ ֆիքսված տարածաժամանակային հարթությունում, ապա այս սկզբունքը պահանջում է նույն մոտեցումների կիրառությունը, բայց արդեն՝ կառավարման շարունակական պրոցեսում՝ հաշվի առնելով կառավարվող օբյեկտը բնութագրող վիճակի հարափոփոխությունը:

Այլ խոսքով, կառավարվող օբյեկտի անցումը պլանավորված վիճակին պետք է տեղի ունենա փոքրագույն ավերումների (քայքայումների) ճանապարհով: Դա նշանակում է կառավարվող հասարակական համակարգի դինամիկ կայունության ապահովում, որն էլ «նպատակների ծառի» մասը կազմող կառավարման նպատակներից մեկն է: Այսպիսով, *համակարգի կայունության ապահովումը նոր պլանավորված վիճակին անցնելու համար անհրաժեշտ փոփոխությունների իրականացման ընթացքում*, պետական սուբյեկտի հիմնական նպատակներից մեկն է:

Այս սկզբունքով է պայմանավորված շատ առաջատար երկրներում գերիշխող՝ «Կայուն սոցիալ-տնտեսական զարգացման» հայեցակարգը:

**Սկզբունք 5 Առավելագույն նպատակահարմարության սկզբունք**

Այս սկզբունքի էությունը խարսխված է նախորդ երկու սկզբունքների

վրա: Այն, օրգանապես կապված լինելով էնթոպիայի տնտեսման և փոքրագույն գործողության սկզբունքների հետ, հանդիսանում է վերջիններիս տրամաբանական շարունակությունը՝ լրացնելով և կոնկրետություն հաղորդելով նրանց: Այս սկզբունքը կրում է իրավիճակային բնույթ և ենթադրում է նաև ժամանակային գործոնի ռացիոնալ օգտագործում: Այսինքն այն հնարավորություն է ընձեռնում նախորդ երկու սկզբունքների կիրառությունը դիտարկել կոնկրետ իրավիճակներում:

### **Սկզբունք 6 Սահմանափակ ռացիոնալության սկզբունք**

Այս սկզբունքը բխում է հասարակական համակարգի կառավարման և ինքնակառավարման զուգակցման օբյեկտիվ անհրաժեշտությունից: Ակներևաբար, պետական կառավարումը չի կարող ընդգրկել կառավարման գործառնությունն իր ամբողջության մեջ, քանի որ նրա ազդեցության ոլորտը սահմանափակված է քաղաքացիական հասարակության ինքնակազմակերպման ձգտումով: Հետևաբար, վերոհիշյալ սկզբունքը ամրագրում է հասարակության՝ որպես ինքնակարգավորվող համակարգի վրա պետական կառավարման դրական ներազդեցության բնական սահմանները: Այդ սահմաններից դուրս պետության կողմից ռացիոնալ ազդեցությունը կամ միջամտությունը հանգեցնում է ոչ թե հասարակական համակարգի կայուն կենսագործունեությանը, այլ ծնունդ է տալիս դիսֆունկցիայի, ոչ թե խթանում է զարգացումը, այլ հանգեցնում է հասարակական օրգանիզմի ամբողջական դեգրադացիայի:

### **Սկզբունք 7 Հետադարձ կապի սկզբունք**

Կառավարման տեսությունում այս սկզբունքը, օժտված լինելով համապիտանի բնույթով, իր սոցիալ-քաղաքական արտահայտման ձևի յուրահատկությամբ հանդիսանում է կառավարչական սուբյեկտ-օբյեկտային փոխհարաբերության կարևորագույն տարրերից մեկը: Շնորհիվ հետադարձ կապի՝ սուբյեկտ-օբյեկտային փոխհարաբերությունները վերածվում են սուբյեկտ-սուբյեկտային: Կառավարվող օբյեկտը, ընկալելով կառավարող ազդեցությունը, իր հերթին ներազդում է կառավարողի վրա՝ այսպիսով հանդես գալով որպես սուբյեկտ: Հենց այս փոխհարաբերություններով է պայմանավորված կառավարչական պրոցեսի ոչ գծայնությունը, ինչը հնարավորություն է ստեղծում կառավարման սիներգետիկ

մոդելավորման: Հետադարձ ազդեցությունը կարող է լինել ինչպես դրական, այսինքն՝ երբ պետական մարմնից առաքվող իմպուլսները ուժեղացվում են կառավարվող օբյեկտի կողմից, այնպես էլ բացասական, այսինքն՝ երբ կառավարվող օբյեկտը մարում է առաքվող իմպուլսների էֆեկտիվությունը: Սակայն ոչ գծային համակարգերում բացասական հետադարձ կապի դեպքում հնարավոր է օպտիմալ վիճակների փունջի առկայություն, որոնցից յուրաքանչյուրում էլ գտնվելով համակարգում առաջ են գալիս զենեացիոն երևույթներ (թռիչքած անցում մեկ վիճակից մյուսին): Հետադարձ կապի ազդեցության բնույթը նախևառաջ կախված է կառավարող համակարգից, կամ թե՛ որքանով է վերջինիս գործունեության ուղղորդվածությունը համապատասխանում կառավարվողների պահանջներին և շահերին:

### **Կազմակերպական, համակարգային և գործառնության սկզբունքներ.**

Պետական կառավարումը իրենից ներկայացնում է բարդ իրավաքաղաքական օրգանիզմ, որը բաղկացած է բազմաթիվ և հարաբերականորեն անկախ ու ինքնուրույն մարմիններից և ծառայություններից: Դրանցից յուրաքանչյուրը կարգավորվում է միայն իրեն հատուկ սկզբունքներով, օրինակ՝ պետական ծառայությունը, որի կառուցման և ինքնակարգավորման սկզբունքներին հնարավոր է անդրադառնալ միայն պետության ընդհանուր համակարգային սկզբունքների լույսի ներքո:

Տվյալ խմբի սկզբունքների թվին են պատկանում այն սկզբունքները, որոնք կանոնակարգում են կառավարչական գործունեության կազմակերպումը և կառավարչական հարաբերություններն իբրև համակարգ:

**Համակարգային մոտեցումը** պետական կառավարման, իբրև համակարգի, կազմակերպման և վերջինիս գործառնության ու զարգացման ապահովման հիմնարար սկզբունքն է: Այն արտացոլում է պետական կառավարման կազմակերպման օբյեկտիվորեն անհրաժեշտ կերպը (ձևը): Տվյալ սկզբունքը խարսխված է երկու հիմնադրույթների վրա՝

1. համակարգային վերլուծությունը, որպես մի կողմից՝ պետական կառավարման գործառնության բացատրության միջոց, մյուս կողմից՝ վերջինիս տեսական մոդելավորման գործիք,

2. համակարգաստեղծ գործունեությունը, որպես՝ համակարգային կա-

ռավարման իրագործման կիրառական գործընթաց:

Համակարգի կազմակերպումը և վերարտադրությունը փոխկապված են համակարգային վերլուծության հետ այնպես, ինչպես պրակտիկան տեսությանը: Համակարգային վերլուծությունը պետական կառավարման տարրերի միջև կապերի բացահայտման և նկարագրության մեթոդ է, որը հնարավորություն է ընձեռում վերջիններիս տեսնել միավորված՝ մեկ միասնության մեջ: Դա, միևնույն ժամանակ, այս կամ այն տարրերը՝ կառույցներ, գործընթացներ, գործողություններ և այլն, համակարգային հատկանիշների փոխակերպելու համար անհրաժեշտ պայմանների նկարագրությունն է: Այս դեպքում շեշտը դրվում է ոչ թե տարրերի զուգակցությունների և տեղակայումների նկարագրության վրա, այլ վերջիններիս կողմից իրագործվող գործառույթների վերլուծության վրա:

Գործառույթը փոխկապվածության մեջ գտնվող կառուցվածքային տարրերի նկատմամբ այնպիսի պահանջների առաջադրումն է, որի արդյունքում որոշակիանում է համակարգային հատկանիշների ձևավորումը: Սա է համակարգի կենսագործունեության և պահպանման համար անհրաժեշտ նախապայմանը: Հակառակ դեպքում խզվում է համակարգի ամբողջական բնույթը, օրինակ՝ գործադիր իշխանության հիերարխիայում վերադաս մարմնին ստորադասի ենթակայության իմաստով որևէ օղակի խախտումը անխուսափելիորեն հանգեցնում է ամբողջ համակարգի կործանմանը:

Համակարգի ներքին կազմակերպվածությունը նկարագրվում է այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են ինտեգրացիան, դիֆերենցացիան, կենտրոնացումը և փոխկախվածությունը: Այն փաստարկների վերլուծությունը, որոնք ապահովում են համակարգի կարգավորումը և պահպանումը, իրականացվում է այնպիսի հասկացությունների օգնությամբ, ինչպիսիք են՝ կայունությունը, հավասարակշռությունը (հակոտնյա ուժերի), նեգատիվ էնթոպիան (ուժերի թվաքանակի և կազմակերպական բարդության աճ), հոմեոստազը (դինամիկ ինքնակարգավորում՝ համակարգի ունակությունը ներքին հավասարակշռության պահպանման իմաստով, նույնիսկ տարաբնույթ փոփոխությունների ճնշման առկայությամբ): Համակարգի դինամիկան արտացոլվում է այնպիսի հասկացություններում, ինչպիսիք են՝ ադապտացիան (հարմարվողականությունը), ճգնաժամը, բեռնվածությունը և այլն:

Կառավարող սուբյեկտի համակարգաստեղծ գործունեությունը պետական կառավարման մեջ համակարգային մոտեցման իրագործումն է: Այս մոտեցման հիմնարար պահանջներից մեկը պետական կառավարման սուբյեկտի նպատակի համապատասխանեցումն է կառավարվող օբյեկտի բաղկացուցիչ մասերի նպատակներին և առաջինի վերածումը համակարգի ընդհանուր նպատակի:

Ընդհանուր նպատակը համապետական նպատակն է, որն իր բովանդակությամբ արտացոլում է ազգային-պետական շահերը: Մասնավոր շահերի նկատմամբ դրանց գերակայության և առաջնայնության ճանաչումն ու ընդունումը հանդիսանում է պետական կառավարման համակարգի կայացման հիմնարար դրույթներից մեկը: Մասի շահերը և նպատակները չեն կարող գերակա լինել ամբողջի նպատակների և շահերի համեմատությամբ: Այս նախադրյալը, բնավ չի հակասում մարդուն որպես պետության գերագույն արժեք ճանաչելու՝ ժողովրդավարական պոստուլատին, որով հետև մարդու շահերը կարող են իրացվել միայն համապետական շահերի իրագործման շրջանակներում:

Այսպիսով, պետական կառավարման մեջ համակարգային մոտեցման պրակտիկ իրագործումը (համակարգաստեղծ գործունեությունը) հանգում է՝

- կառավարող օբյեկտի և կառավարվող սուբյեկտի (հասարակություն, հասարակական խմբավորումներ և շերտեր) նպատակների ընդհանրության հաստատմանը,
- բոլոր այլ նպատակների ենթակայությանը համակարգի ընդհանուր նպատակին, ինչպես նաև՝ կենտրոնական, տարածքային և տեղական մակարդակներում կառավարող սուբյեկտների նպատակների համաձայնեցմանը (կորելյացիային),
- համակարգի բաղկացուցիչ մասերի շահերի նկատմամբ համապետական շահերի և նպատակների առաջնայնությանը, ինչը հանդիսանում է պետական կառավարման՝ որպես ամբողջական համակարգի, կազմակերպման առանցքային դրույթը,
- պետական իշխանության առանձին ճյուղերի կառավարման համակարգերի (պետական կառավարման ենթահամակարգերի) ստեղծմանը,
- համակարգի ստեղծման համար անհրաժեշտ բազիսի (էլիտայի) առկայությանը, որը հանդիսանում է համակարգի հարմարվողականության



(ադապտացիայի) և զարգացման (մոդեռնիզացիայի) կարգավորիչ և ուղղորդիչ գործոնը,

• պետական կառավարման ուղենիշների և քաղաքականության գերակայությանը, որը բխում է այն հանգամանքից, որ պետական կառավարման ամբողջական ինստիտուտի կայացման համար համակարգային գործոն է հանդիսանում կենտրոնական իշխանության քաղաքական ռազմավարությունը, իսկ առանձին ենթահամակարգերի համար՝ քաղաքականության առանձին տեսակները:

Բնականաբար, ժողովրդավարական պետությունում կառավարման համակարգը համարժեք է ինքն իրեն: Նմանօրինակ համակարգի ստեղծման ժամանակ անխուսափելիորեն ծագում է ժողովրդավարության և ցենտրալիզմի զուգակցման խնդիրը:

«Ինչպիսին՞ պետք է լինի ցենտրալիզմը» հարցի պատասխանը միարժեքորեն ենթադրում է, որ այն պետք է լինի ոչ խմբակային և ոչ էլ բյուրոկրատական: Բայց և իշխանության ծավալները, որոնք պատվիրակվում են «ստորին» մակարդակներ, չպետք է գերազանցեն այն եզրը, որից հետո տարածքային և ինքնակառավարման մարմինները վերածվում են ինքնաբավ և կենտրոնական իշխանությունից անկախ միավորների, և որպես հետևանք՝ փլուզվում է ամբողջ համակարգը:

Այս խնդրի լուծումը խարսխված է համակարգային-կառուցվածքային բնույթի մեկ այլ սկզբունքի վրա:

### **Սկզբունք 8 Ժողովրդավարության հիմքի վրա կառուցված ցենտրալիզմի սկզբունք**

Արդեն իսկ պարզաբանվել է, որ պետական իշխանության կենտրոնացումն ու ապակենտրոնացումը օբյեկտիվորեն օրինաչափ են: Հետևաբար, դրանք կարող են իրականացվել ինչպես ժողովրդավարական, այնպես էլ տոտալիտար կարգերում:

Կենտրոնացումը պետության միասնականության, նրա ընդհանուր նպատակների և շահերի մարմնավորումն է, առանց որի չի կարող լինել պետական կառավարման ամբողջական համակարգ: Այդուհանդերձ, կենտրոնացումն իր մեջ կրում է իշխանական լիազորությունների չափից ավելի կոնցենտրացման և մեկ բարձրագույն մարմնով կառավարումը իրագործելու միտում: Դրան հակառակ՝ ժողովրդավարությունը հնարա-

վորություն է ստեղծում հակոտնյա խմբերի շահերի և նպատակների դրսևորմանը, որը անխուսափելիորեն հանգեցնում է կենտրոնախույս ուժերի խթանման և միասնական համակարգի մեջ չներգծվող կառավարման սուբյեկտների բազմաբևեռության: Այս հակադրությունները հաղթահարվում են մի կողմից՝ կենտրոնացման սահմանափակումով, կառավարման համակարգի իրավական մեխանիզմներով և կազմակերպական-քաղաքական համալիրով, մյուս կողմից՝ պետական իշխանության բուրգի մեջ ժողովրդավարական արժեքների որդեգրմամբ:

Ժողովրդավարության հիմքի վրա ցենտրալիզմի կառուցման սկզբունքը առաջադրում է կառավարող համակարգի գործունեությանը և կառավարվողների վարքագծին առնչվող համալիր պահանջներ: Դրանք են՝

• կենտրոնական պետական մարմնին հասարակության կողմից պատվիրակված իշխանության և կառավարչական լիազորությունների կոնցենտրացում, ընդ որում՝ այն սահմաններում, որոնք պայմանավորված են համապետական նպատակներով և շահերից բխող հստակ գործառնություններով,

• տարածքային և տեղական մակարդակներում, պետական կառավարման մարմինների կողմից օբյեկտների կառավարման համար անհրաժեշտ գործառնությունների շրջանակներում, իշխանության ապակենտրոնացում՝ վերից վար պատվիրակվող լիազորությունների տեսքով: Ինչը, մի կողմից, ենթադրում է այդ մարմինների ինքնուրույնությունը իրենց իրավասությունների շրջանակներում և կայացված որոշումների ու գործողությունների համար պատասխանատվությունը հասարակության առջև, մյուս կողմից՝ պատասխանատվությունը կենտրոնի առջև համապետական քաղաքականության իրագործման համար,

• տարածքային, միջմարզային կազմավորումների ձևավորում, որոնց գործունեությունը հրահանգավորվում է Կենտրոնի կամ մի շարք մարզային մարմինների կողմից և շոշափում է ազգաբնակչության համապատասխան շերտերի շահերը,

• համապետական, տարածքային և տեղական ինքնակառավարման սուբյեկտների միջև փոխհարաբերությունները պետք է բնութագրվեն՝

ա) ստորադաս մակարդակում տեղակայված սուբյեկտների ենթակայությունը վերադասին՝ վերադաս մարմնի լիազորությունների իրականացման սահմաններում,

բ) գործողությունների համաձայնեցվածությունն ընդհանուր վարման ենթակա հարցերի շուրջ,

գ) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է օժտված լինեն տարածքի ազգաբնակչությանը կառավարելու ինքնուրույնությամբ օրենքով ամրագրված և այստեղից բխող պետության առջև ունեցած պատասխանատվության շրջանակներում:

### **Սկզբունք 9 Տարածքային և ճյուղային կառավարման միասնության սկզբունք**

Այս սկզբունքը ներկայացնում է ժողովրդավարության և ցենտրալիզմի իրագործման համար անհրաժեշտ կոնկրետ պահանջներ: Խորհրդային համակարգում գործում էին երկու մրցակցող սկզբունքներ՝ ճյուղային և տարածքային: Գերակայող էր առաջինը՝ ճյուղայինը, իսկ տարածքային կառավարման սկզբունքը մղվել էր ետին պլան: Միայն 1958-1966թթ. ընկած ժամանակահատվածում էր, որ երկրորդ մոտեցման կողմնակիցները մվաճումներ ունեցան: Մասնավորապես, այդ ժամանակաշրջանում ստեղծվեցին տնտեսության կառավարման նոր տարածքային կազմավորումներ՝ սովնարխոզներ: Սակայն կառավարման վարչահրամայական համակարգը չզիջեց իր դիրքերը և ճյուղային սկզբունքը, որի էությունը ճյուղային նախարարությունների միջոցով կենտրոնացված կառավարումն էր, նորից վերանվաճեց իր դիրքերը: Խորհրդային համակարգի պատմության այս կարճ ժամանակահատվածը հատկանշական է երկու իմաստով: Մի կողմից՝ այն ցույց է տալիս տարածքային կառավարման մեջ ժողովրդավարական սկզբունքին հակոտնյա գերհագեցած պետական ցենտրալիզմի կարծրությունը, որն այն ժամանակներում մերժեց տնտեսության կառավարման միանգամայն նպատակահարմար կերպը, մյուս կողմից՝ ակնհայտ ծագած խնդիրների ժողովրդավարական քննարկման համակարգում առկա հնարավորությունները, ընդ որում պետական-կուսակցական իշխանության բոլոր մակարդակներում:

Վերը շարադրվածից երևում է, որ սկզբունքի էությունն այն է, որ կառավարման ճյուղային մոտեցումը, որպես ցենտրալիզմի դրսևորում, անտրոհելի է կառավարման հորիզոնական հարթության մեջ ժողովրդավարության դրսևորումը հանդիսացող կառավարման տարածքային մոտեցումից: Այստեղից բխում է, որ ճյուղային խնդիրների լուծումներից, կենտրո-

նական իշխանության օգնությամբ, պետք է աստիճանական անցում կատարել մեծածավալ ենթակառուցվածքային խնդիրների վճռմանը: Միայն այս դեպքում կուրվագծվի միասնական պետության տնտեսության կմախքը:

Ակներևաբար, պետական կառավարման համակարգի նպատակային կառուցվածքը դեռևս երկար տարիներ կմնա այնպիսին, ինչպիսին այսօր է՝ համապետական, տարածքային (յուրահատուկ) և տեղական (մասնավոր): Այս կառույցում իրենց տեղը կգտնեն այնպիսի նպատակներ, որոնք կապված են տնտեսական և մշակութային առանձին ճյուղերում և ոլորտներում զբաղված ազգաբնակչության խմբերի շահերի և պահանջների հետ: Հետևաբար, կառավարման մեջ ճյուղային և տարածքային մոտեցումների զուգակցման (միասնության) անհրաժեշտությունը չի դադարի մնալ արդիական:

Համակարգային, ֆունկցիոնալ և կառուցվածքային սկզբունքների թվին են պատկանում պետական որոշումների կայացման սկզբունքները: Դրանք պայմանավորված են կառավարման հիմնական գործառույթներով և բնորոշում են որոշումների կայացման գործընթացի կառուցվածքն ու բովանդակությունը: Այդ սկզբունքները արտահայտում են գործառույթների իրագործման, դրանց միասնականության և հեթեթականության պահպանման անհրաժեշտությունը: Այդ սկզբունքներում նաև հաստատագրվում են սահմանադրական և այլ նորմատիվային դրույթներ, որոնք ձևակերպված են որոշումների կայացման կանոնների տեսքով: Դրանք են

1. որոշումների կայացման փուլային գործընթացի ապահովումը,
2. կառավարչական ազդեցության՝ նպատակների, ուղղությունների, խնդիրների, մեթոդների և միջոցների միասնականության ապահովումը,
3. որոշումների ընդունման ընթացակարգերի միասնականության և սահմանված նորմերի պահպանման անհրաժեշտությունը,
4. ղեկավարի պատասխանատվությամբ միանձնյա կերպով կայացված որոշման և կոլեկտիվ քննարկման զուգակցության ապահովումը:

Ավարտելով՝ հարկ է նշել, որ յուրաքանչյուր համակարգում որոշ ընդհանուր սկզբունքներ ձեռք են բերում իրագործման կոնկրետ բովանդակություն և ձև: Բացի այդ, յուրաքանչյուր տրված համակարգում կյանքի են կոչվում այն սկզբունքները, որոնք համապատասխանում են նրա նպատակների բովանդակությանը, գործառույթների բնույթին և իշխող

սուբյեկտի սոցիալ-քաղաքական տիպին (տեսակին):

### §3.3 Ներդաշնակ Պետական կառույցը և նրա կառավարման համակարգը

Վերը շարադրվածի հիման վրա առաջարկվելիք պետության մոդելը ներդնելու համար անհրաժեշտ է ելնել պետական կառավարման համակարգի իրական վիճակից, նրանում առկա զարգացումներից և միտումներից: Հարկ է հաշվի առնել, որ տեսանելի պետական կառավարման նոր մոդելի տարրերն արդեն իսկ առկա են մերօրյա պետական համապատկերում, խնդիրն այդ տարրերի միջև գործող համակարգային կապերի ներքին տրամաբանության փոփոխումն է՝ որպես ուղենիշ ունենալով ազգ-պետության նպատակային գործառնությունները: Նկատի ունենալով, որ այսօրինակ խնդրի լուծումը չպետք է երբևէ հանգեցնի գործող կառավարման համակարգի կաթվածահարմանը, ենթադրվում է իրագործման հարթության մեջ առաջնորդվել աստիճանականության սկզբունքից ելնելով:

Այս մոտեցման դեպքում գոյություն ունեցող պետական համակարգում գործունեության ծավալման ընթացքն ընդգրկում է երկու ենթաուղղություն՝ ռազմավարական-հեռանկարային և մարտավարական-իրավիճակային: Առաջինը ենթադրում է այնպիսի միջոցառումների իրագործում, որոնց արդյունքում պետական կառավարման համակարգն աստիճանաբար պետք է մղվի դեպի կանխորոշված (պլանավորված) վիճակ: Հետևաբար, այս ուղղությունը կրում է առավելապես համակարգային և արժեքային բնույթ: Մարտավարական-իրավիճակային ուղղությունը ենթադրում է այնպիսի միջոցառումների իրագործում, որոնք ելնում են պետական կառավարման համակարգի առկա վիճակից և նպատակ ունեն օժանդակելու ռազմավարական գործողություններին:

Թե՛ մեկ, և թե՛ մյուս դեպքում փոփոխությունները պետք է ընդգրկեն պետության կառուցվածքային-կազմակերպական և գործառնության հիմքերը: Առաջնորդվելով նախորդ շարադրանքում արծարծված հայկական աշխարհընկալմամբ պայմանավորված պետության կառուցման հիմնարար մոտեցումներով՝ երկրորդ գծապատկերում ներկայացվել է ներդաշնակ պետության սխեմատիկ նկարագիրը: Պատկերված կառուցվածքում կետգծերով առանձնացվել է գոյություն ունեցող պետական կառավար-

ման համակարգը և նրա ենթամիավորների միջև առկա ֆունկցիոնալ կապերը: Կետգծերից դուրս գտնվող ենթահամակարգերը դեռևս ձևավորված չեն, սակայն ռազմավարական տեսանկյունից առաջարկվելիք կառույցում դրանց ներդրմամբ է պայմանավորված պետական կառավարման ամբողջ կառույցի էությունը բնորոշող համակարգային կապերի փոփոխությունը:

Փոփոխությունների նպատակամղվածությունն ածանցված է պետության գերակայություններից՝ Լեզու, Կրթություն և Մշակույթ (§2.2)՝ որպես ուղենիշ ընդունելով պետական կառավարման համակարգի հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները.

- ազգային նկարագրին համապատասխան իշխանության վերարտադրության մեխանիզմների ստեղծում և ներդրում,
- հոգևոր և աշխարհիկ կառույցների միջև ներդաշնակ փոխհամագործակցության ապահովման միջոցով Պետական իշխանության շարունակականության մեխանիզմների ստեղծում և ներդրում (§2.2),
- հայկական կենցաղավարման ընկալման վերագտնում և ներդրում,
- հասարակական և Պետական կառավարման համակարգերի միջև բազմաբնույթ հետադարձ կապերի ստեղծում և ներդրում (§3.2),
- ճյուղային և տարածքային կառավարման զուգակցումն ապահովող ենթակառույցների ստեղծում և ներդրում (§3.2):

Ենթադրաբար, այս փոփոխությունները հանդիսանալու են պետական կառավարման համակարգում ազգային-բարոյական բաղադրիչի ձևավորման հետևանք, քանի որ բնական տեսակների տարածաժամանակային մարմնի ամեն մի արտաքին փոփոխություն արտացոլանքն է գիտակցական և հոգևոր կյանքում կատարվող այն փոփոխությունների, որոնք խարսխված են պետականաստեղծ տեսակի ազգային արժեքների վրա (Գլուխ1-2): Թերևս այս պարագայում է հնարավոր կատարյալ ներդաշնակության լինելիությունը ժողովրդի ոգեկառույցի և հանրային իրավակարգի ու պետական հաստատությունների միջև:

Պետության բարոյական բաղադրիչն օրինաչափված է իշխանական հարաբերություններում էթիկական չափումների հետ (աղյուսակ 1), որոնք, Մաքիավելլու ժամանակներից սկսած, ձեռք են բերել կառուցվածքային հստակություն: Պատմական իրողությունը միշտ էլ սրվածություն է հաղորդել այս խնդիրն: Մասնավորապես, Մաքիավելլու անվան հետ են

կապում իշխանական հարաբերություններում և քաղաքականությունում բարոյական հիմնավորումների մերժումը: Իրականում նա ընդամենը առանձնացրել է իշխանական հարաբերությունների պրագմատիկ և բարոյական կողմերը, որի արդյունքում իշխանական փոխհարաբերությունների գնահատման ընթացքում ոչ թե բացառվել է բարոյական տեսանկյունը, այլ մերժվել է դրա բացարձակացումը: Պատմական այդ ժամանակահատվածում այսօրինակ տարանջատման անհրաժեշտությունը բխում էր ժամանակի ոգուց, քանի որ համանարդկային արժեքների իռացիոնալ համակարգին գալիս էր փոխարինելու ռացիոնալ աշխարհայացքը, և բարոյական նպատակների, լոգունգների ու խնդիրների գերակայությունն այլևս անընդունելի էր:

Իշխանական փոխհարաբերություններում բարոյականության ներգրավվածությունը կանխորոշված է վերջինիս կարգավորիչ բնույթով, քանի որ ղեկավարումը ենթադրում է համակարգի անցումն առավել փոքր հավանական վիճակի, ապա ակնհայտ է դառնում այդ անցման իրագործման ընթացքում բարոյական նորմերի և սկզբունքների՝ իբրև եզրային պայմանների դերակատարությունը:

Այսպիսով, բարոյական նորմերը հանդիսանում են այն զսպող գործոնները, որոնք կանխարգելում են սոցիալական համակարգի անցումն առավել հավանական (անկարգ) վիճակի, այսինքն՝ հենց այդ նորմերն են սահմանազօնում համակարգի այն եզրերը, որոնցից անդին սկիզբ են առնում ինքնառջնացման և դեգրադացիոն պրոցեսները:

Յետևաբար, ցանկացած ռացիոնալ իշխանություն կարիք ունի մարդկային էությանը ներակա կարգավորիչ այնպիսի առանցքի, որը պետք է սահմանափակի իշխանական հարաբերությունների և լիազորությունների գործածությունը ոչ պետական եսակենտրոն և շահախնդիր նպատակներով: Նմանօրինակ ինտեգրող և կարգավորիչ առանցք են հանդիսանում ազգային բարոյական օրենքները, որոնք ոչ միայն վարքի և կենցաղն նորմերի հավաքածու են, այլև բնական տեսակի էությունը խորհրդանիշների միջոցով ներկայացնող մի կուռ համակարգ: Իսկ էությունն ասածը պարունակում է տվյալ տեսակի ծավալման օրինաչափությունները, կենցաղավարման ընկալումները, ստեղծագործելու սկզբունքները և կերպը: Այսինքն՝ ապրելակերպը նույնպես ստեղծագործություն է և արարում: Յետևաբար, բարոյական նորմերի համակարգը նաև ազգային բնութագր

րիչների ամբողջությունն է, և կենցաղը այս դեպքում անկասկած դառնում է էության արտաքին կողմն ու արտահայտությունը՝ որպես այդ էության ինքնաիրացում (է-թիկա):

Վերոշարադրյալից բխում է, որ իշխանական հարաբերությունների գնահատման կարևորագույն չափանիշ է *կարգավորվածության* հասկացությունը, որի շրջանակներում են գտնվում սոցիալական հարաբերությունների զարգացման և գործառնության նպատակաձևվածությունները:

Յասարակական գիտակցության մեջ կարգավորվածության արժեքը բնորոշվում է իշխանական հարաբերություններում երկու միտումների՝ կարգավորվածության և անկարգության մղումների մշտական պայքարով և փոխազդեցությամբ: Այս երկու հակոտնյա մղումները, փոխներգործելով աղերսվում են երկու տարամետ սոցիալական օրինաչափություններին, որոնք մի կողմից ապահովում են սոցիալական համակարգերի փոփոխության դինամիկան, մյուս կողմից՝ դրանց գործառնությունն ու ժամանակի մեջ վերարտադրությունը: Տվյալ տարամիտության յուրաքանչյուր կողմ փոխլրացնում է մյուսին: Մասնավորապես, անկարգությունը նախապայման է համակարգի կարգավորվածության համար, քանի որ այն, ավերելով և ցնցելով գոյություն ունեցող կազմակերպվածությունը, նպաստում է նոր, առավել կենսունակ կազմավորման առաջացմանը: Յետևաբար, պետականաշինարարության մեջ չվերահսկվող իշխանության հաստատումը չարիք է և կործանարար ազգային պատվանդանի վրա կանգնած ամբողջ պետական կառույցի համար: «Ստորին» մակարդակների կողմից վերահսկողության և «վերին» մակարդակների կողմից սահմանափակումների առկայությունը Ազատության կայացման գրավականներն են «Քաղաքական ազատությունը ծնունդն է բարոյական ազատության, և ազատ կյանք կա միայն այնտեղ, ուր անխաթար խղճնտանքներ կան»<sup>2</sup>: Այս դեպքում ոչ միայն իշխանությունը կրողների, այլ նաև իշխանության ազդեցության ներքո գտնվողների համար ստեղծվում են բոլոր նախապայմանները սեփական էության հետ կապերի ամխազդելիության պահպանման համար, ինչը կառավարման գործընթացում ապահովում է ինֆորմացիոն բազմազանության ներդաշնակ գոյակցությունը (§3.2):

Այսպիսով, արդյունավետ իշխանությունը պետք է ապահովի սոցիալական համակարգի թե՛ կայունությունը և թե՛ զարգացումը՝ կողմնորոշվելով

<sup>2</sup> Գ.Նժդեհ, «Մետապոլիտիկա; պատմության փիլիսոփայությունը»:

երկու արժեքների հանդեպ էլ դրականորեն և ոչ բնավ ի վնաս որևէ մեկի: Նմանօրինակ կարողության գրավական է հանդիսանում մի կողմից՝ կառավարչական գործընթացների նորմավորումն ըստ որոշակի (օրենքներով և ենթօրենսդրական ակտերով ամրագրված) ընթացակարգերի, որոնց հիմքում պետք է ընկած լինեն պետական կառավարման բնական օրենքներն ու օրինաչափությունները (§3.2), մյուս կողմից՝ ոչ ֆորմալ (օրենսդրորեն չկարգավորվող) փոխհարաբերությունների վերահսկողության ինստիտուցիոնալ մեխանիզմները (գծապատկեր 2): Գծապատկերում այդ ինստիտուցիոնալ դրսևորումը ներկայացված է «էթիկայի հանձնաժողովների», «Հայ Առաքելական Եկեղեցու» և «Բարձրագույն քաղաքական պաշտոնյաների պատրաստման կենտրոնների» միջև որոշակի ֆունկցիոնալ կապերի տեսքով:

Իշխանական մեխանիզմները խթանվում և երևութականացվում են որոշակի արժեքային միջավայրում: Դա կանխորոշվում է նրանով, որ իշխանությունը, իր դրսևորման բոլոր հակասություններով և բազմազանությամբ հանդերձ, ներկայանում է իբրև հասարակ կյանքում նպատակաուղղվածություն ներմուծող գործոն՝ այդպիսով նվազեցնելով վերջինիս զարգացման ստուգատիկությունը: Չնայած դրան, այդ գործոնի իրագործումը կատարվում է սկզբունքորեն ոչ ռացիոնալ միջավայրում: Միայն իմացաբանական տեսանկյունից ապագայի կանխատեսման և հասարակական կյանքի կանոնակարգման անհնարիությունն իշխանությանը վերածում է այդ կյանքի նկատմամբ հարմարվողականության լավագույն միջոցի: Իշխանության էֆեկտիվությունը կախված է իր գործունեության մեխանիզմում այնպիսի տարրերի ներմուծումից, ինչպիսիք են արտաքին (իռացիոնալ) միջավայրի բաղադրիչները: Դրանց թվին են պատկանում այն արժեքները, որոնք օրգանական կապերի մեջ են մարդկային ցանկություններով, նախասիրություններով և մղումներով սահմանված եռամիասնության հետ: Վերջիններս էլ, այս կամ այն չափով, մարդկային կյանքին հաղորդում են իռացիոնալություն:

Եթե համարենք, որ գաղափարախոսությունն իշխանության ֆունկցիաների բնույթի և բնութագրման առավել համապատասխան սոցիալական հակադարձ արտացոլանքի տեսակ է, ապա պարզ կդառնա գաղափարախոսության, իշխանության և քաղաքականության կապերի բնույթը: Գաղափարախոսությունն իրացվում է քաղաքական միջավայրում՝ իշխանու-

թյանը ընձեռնելով իրական պատկերի պարզեցման, նրանում ուղղվածության, կառավարման օբյեկտների հանդարտեցման, նրանց վարքի ղեկավարման, գործողությունների կողողինացման հնարավորություն: Գաղափարախոսության այս ֆունկցիաները պայմանավորված են նրա արժեքային բնույթով: Մեծամասամբ, գաղափարախոսությունը սահմանվում է որպես իշխանության հետ անխզելիորեն կապված արժեքների և սոցիալական նախասիրությունների համակարգ: Այսպիսով, գաղափարախոսությունը հանդիսանում է իշխանական գործողությունների հիմնավորման լավագույն ձև:

Ցանկացած կառավարման համակարգի լավագույն գործառնությունը և զարգացումը կանխորոշվում է իր կեցության ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ արժեքային հայեցակետերի միավորման կարողությամբ: Այդպիսի միասնության անհրաժեշտությունն ու օրինաչափությունը կանխորոշվում է մի շարք պատճառներով, որոնք կարելի է ձևակերպել հետևյալ կերպ:

Առաջին հերթին, իշխանական հարաբերությունների նորմատիվային բնույթով սոցիալական նորմը ֆեյնոմեն է, որտեղ օրգանապես փոխկապվում են իմացաբանությունն ու արժեքային ընկալումները: Չէ՞ որ նրա գործունեության մեխանիզմը «ենթադրում է ոչ միայն վերջինիս իմացություն (ինֆորմացիոն յուրացում)», իրացման ցանկություն (գործողությունների մղում) կամ հակառակը՝ գործողությունների բացառում, այլ նաև գործողությունների կամք և ինքնին գործողություն (իրացում):

Երկրորդ, իշխանության և մշակույթի միջև առկա փոխհարաբերություններով (§2.2), որոնք երևութական դրսևորման մեջ վերարտադրում են իշխանության գործառնությունը որոշակի բարոյական միջավայրում: Ակներևաբար, այդ միջավայրի վիճակն ու մթնոլորտն որակապես ազդում է իշխանական հարաբերությունների ամբողջ գունապնակի վրա: Հենց այդ պատճառով էլ պետական կառավարման համակարգում ի հայտ են գալիս խորհրդագործական բնույթի տարրեր (ի տարբերություն ոչ պետական կառավարման սուբյեկտների), որոնք հիմք են տալիս բացահայտելու հոգևոր կառույցների (Հայ Առաքելական Եկեղեցի) և պետության կառավարման համակարգի միջև օպտիմալ ֆունկցիոնալ կապերի հաստատման եղանակները (գծապատկեր 2): Ճշմարիտ Պետության դեպքում եկեղեցին, որ հոգևորի կրողն է, պետք է լինի Պետության ներքին բովանդա-

կությունը, ոգեղեն էությունը մարմնավորող կառույցը, սակայն իրականում պատկերն այլ է: Պետությունն այսօր ընդամենը կառավարման համակարգ է, որը զբաղված է հիմնականում մարդու սոցիալ-տնտեսական և դրա հետ կապված այլ խնդիրներ լուծելով: Եկեղեցի-պետություն ֆունկցիոնալ կապն այսօր մի կողմից սահմանափակվում է կառավարության հետ կնքված հուշագրով, մյուս կողմից՝ եկեղեցին, ընդունելով նյութի գերակայությամբ առաջնորդվող պետական համակարգը, մարդկանց քարոզում է նյութի աշխարհում ապրել հոգևոր արժեքներից բխող բարոյականությամբ:

Արդ, եկեղեցին, որ հոգևոր արժեքը անկյունի քար է դարձրել, ներդաշնակ պետական կառավարման համակարգում (զծապատկեր 2) աստիճանաբար կստանձնի ճշմարտության Ուղին նախանշելու իր դերը, որն է՝ հոգևոր արժեքից բխած անկյունի քարը կյանքի բուն իմաստ դարձնելով, ժողովրդի մեջ ոչ թե ես, այլ մենք հոգեբանության արմատավորումը: Ինքնահաղթահարման ճանապարհով ինքնափոփոխումն է բարոյական առաջընթացի գրավականը, և իջնելով բարձրացնելն է իրական բարձունքի նվաճման եղանակը: Այս դեպքում ազգային կյանքը լիովին կտարբերվի նյութապաշտ ու կրոնական դոգմատիզմի ճահճացած վիճակից և հերձվածությամբ տոգորված հասարակարգը անշուշտ կնահանջի, քանի որ այստեղ սրբության ընթացքով պետությանը խորհրդագործական իմաստ է ձեռք բերում, թեկուզ և աստիճանական. «Լավագույն պետությունն այն է, որտեղ քաղաքացիները կշտամբանքից ավելի են վախենում, քան օրենքներից»<sup>3</sup>:

Պետության բարոյական բաղադրիչի ձևավորման գործընթացը

Այսպիսով, դիտարկելով միջանձնային եւ կազմակերպական հաղորդակցության համակարգը, կարելի է առանձնացնել համակարգի ֆորմալ և ոչ ֆորմալ բաղադրիչները: Ֆորմալ բաղադրիչ ասելով՝ նկատի է առնվում իրավական գործիքների այն համախումբը (քաղաքացիական ծառայության մասին օրենք, կարգապահական կանոններ, աշխատակազմի տիպային կանոնադրություն և այլն), որոնք, որպես վարքի պարտադիր կանոններ, բնորոշում են պետածառայական ոլորտում առկա պաշտոնեական փոխհարաբերությունները: Ոչ ֆորմալ բաղադրիչը իրենից ներկայացնում է վարքագծի նորմերի այն համախումբը (քաղաքացիական ծա-

ռայողի էթիկայի կանոններ, մասնագիտական վարքի չափորոշիչներ, էթիկայի հանձնաժողովների որոշումները և այլն), որոնք օժտված չեն իրավական ուժով, սակայն պայմանավորված լինելով տրադիցիոնալ և մասնագիտական յուրահատկություններով՝ կայուն բնույթ ունեն և իրական կյանքում մեծապես կանխորոշում են պաշտոնեական փոխհարաբերություններով կաղապարված միջանձնային արժեքների համակարգը:

Այդ իմաստով նպատակահարմար է, ի թիվս օրենսդրական փոփոխությունների, որոնք առաջարկվել են սույն փաստաթղթում, ստեղծել Վարքի օրենսգրքեր, որոնց պահպանման խնդիրը կարելի է դնել էթիկայի հանձնաժողովների վրա: Ընդ որում, ոչ թե մեկ ընդհանուր կանոնների փաթեթ պետք է մշակել, այլ՝ տարբերակված վարքի օրենսգրքեր այն մարմինների համար, որոնց հիմքի վրա է կառուցվում Պետության կառավարման քաղաքական համակարգը, դրանք են՝

1. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ,
2. ՀՀ Սահմանադրական և մնացած ատյանների դատարանների աշխատակազմեր,
3. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ,
4. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմ,
5. քաղաքացիական ծառայության համակարգ:

ՀՀ Ազգային ժողովի Վարքի օրենսգրքի ընդունման նախադրյալ է հանդիսանում այն, որ բոլորովին վերջերս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում կատարված նորամուծության արդյունքում նորընտիր պատգամավորները պարտավոր են երդվել և ստորագրել երդման տեքստի տակ (գլուխ 5, 34 հոդված, 4-րդ ենթակետ): Դա հնարավորություն է ընձեռում բարոյահոգեբանական հարթության մեջ պատգամավորների վարքագիծը դարձնել վերահսկելի: Մյուս կողմից, ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների գործունեությունը երաշխավորված է ՀՀ օրենքներով: *Հետևաբար, միջինժամկետ կտրվածքում, պատգամավորների վարքագծի բարոյահոգեբանական բաղադրիչը վերահսկելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ կատարել Ազգային ժողովի կանոնակարգում՝ հավելելով այն հանգամանքը, որ երդման իրագործումը պետք է խարսխված լինի ՀՀ պատգամավորի բարոյական վարքականոնի վրա՝ որը կարող է ընդունվել Ազգային ժողովի որոշումով:*

3 Քլեոբուլոս:

Մյուս մարմիններում վարքի օրենսգրքի ընդունումը կարող է կայանալ այդ մարմինների կանոնադրություններում համապատասխան փոփոխությունների ճանապարհով, իսկ քաղաքացիական համակարգում էթիկայի կանոնները արդեն իսկ հաստատվել են քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից:

Ինչ վերաբերում է վարքականոնի հսկողության ընթացակարգերին, ապա **առաջարկվում է՝**

Ընտրությունների միջոցով վերը թվարկված բոլոր մարմիններում ստեղծել էթիկայի հանձնաժողովներ, որոնք պետք է անկախ լինեն տվյալ մարմնի ղեկավարությունից, և որոնց կազմում կարող են ներգրավվել ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն ստանձնած հասարակական միավորումները: Հանձնաժողովների ստեղծման և աշխատանքի ընթացակարգերը պետք է որոշվեն այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբերում:

Ստորև անդրադառնալով այն ընդհանուր մոտեցումներին, որոնց հիման վրա պետք է մշակվեն վարքի օրենսգրքերը:

#### *Վարքի օրենսգրքի (Կանոնների) հիմնադրույթները*

Վարքի օրենսգրքը կառավարման կարևոր գործիք է, որը կարող է դրականորեն ձևավորել կազմակերպության մշակույթը: Շատ կազմակերպություններ հանդգնել են, որ էթիկական հարցերի նկատմամբ որոշակիորեն հստակ մոտեցումը բարելավում է կազմակերպության համբավը, օգնում է գործին և անձնակազմի մեջ հպարտության զգացում դաստիարակելուն:

Յուրաքանչյուր կազմակերպության անձնակազմ իրեն պետք է այնպես պահի, որպեսզի պահպանի հավատն ու հասարակական վստահությունը կազմակերպության հանդեպ: Ենթադրվում է, որ անձնակազմը, հատկապես պետական հիմնարկներում, իր աշխատանքը կկատարի արդյունավետ, ազնիվ ու անաչառ:

Վարքի օրենսգրքը սահմանում է տվյալ պետական մարմնի անձնակազմի վարքագծի չափորոշիչները, որոնք պետք է օգնեն լուծելու իրենց աշխատանքում հանդիպած էթիկական երկընտրանքները: Քանի դեռ չկան սահմանված կանոններ, որոնք պարզաբանում են կազմակերպությունում ծագած էթիկական բոլոր հիմնախնդիրները, վարքի օրենսգրքը

ապահովում է այն շրջանակները, որոնց սահմաններում անձնակազմը կարող է համերաշխ կերպով աշխատել: Չնայած շեշտը պետք է դրված լինի էթիկապես օրինակելի վարքագծի վրա, ծառայողները պետք է տեղեկացված լինեն նաև, թե ինչ կա կամ ինչ կարող է լինել, եթե խախտեն օրենսգրքը:

Գործում լինելու համար օրենսգրքը պետք է բովանդակի ավելին, քան անորոշ սկզբունքներն են: Եթե այն իրոք կոչված է ամենօրյա աշխատանքում օգնելու անձնակազմին, ապա օրենսգրքը պետք է ներառի հստակ ձևավորված սկզբունքներ և օրինակներ, որոնք կիրառելի են կազմակերպության կոնկրետ պարտականություններում: Անձնակազմը պետք է առաջնորդվի նաև կազմակերպության այլ փաստաթղթերով, օրինակ՝ ղեկավարող սկզբունքներով, հրահանգներով և այնպիսի մեխանիզմներով՝ ինչպիսիք են գրույցը գործընկերոջ կամ ղեկավարի հետ, որոնք կարող են օգնել լուծելու հիմնախնդիրները, որոնք անմիջապես օրենսգրքում ընդգրկված չեն: Վարքի լավ օրենսգրքը ակտիվ փաստաթուղթ է, որին դիմում է կազմակերպության ամբողջ անձնակազմը, այլ ոչ թե մի փաստաթուղթ, որը դրված է ղեկավարի գրասենյակի գրադարակում:

#### *Վարքի օրենսգրքի արդյունավետ կատարման ու մշակման համար առաջնորդող սկզբունքները*

Որպեսզի օրենսգրքը լինի արդյունավետ, այն չպետք է լինի պատվիրված կամ պատվիրակված կանոնների ժողովածու, այլ պետք է մշակված լինի յուրաքանչյուր պետական մարմնի և նրա անձնակազմի կողմից, որպեսզի ընդգրկի նրա յուրահատուկ պահանջները: Բացի դրանից, այն պետք է նպաստի կազմակերպությունում բարոյական մշակույթի ձևավորմանը:

Օրենսգրքը պետք է մշակվի խորհրդատվությունների միջոցով, ինչը թույլ կտա բոլոր աշխատակիցներին, այլ ոչ միայն պետական մարմնի ղեկավարին, մեկնաբանել ընդգրկվող հարցերի համալիրը: Ըստ ձևի՝ ենթադրվում է, որ այն պետք է պետական ծառայողներին, **խորհուրդ** ներշնչելով, մի կողմից վեհացնի, մյուս կողմից՝ պարտավորեցնի: Այս դեպքում, պետական ծառայողը կնպաստի իր կոչման հեղինակության բարձրացմանը, որը իր հերթին, հետադարձ կապով, հանդես է գալիս որպես հոգեբանական վերահսկողության գործոն:

Անդրադառնալով Վարքի օրենսգրքերում ընդգրկվելիք միակերպ բաղկացուցիչ մասերին՝ հարկ է նշել, որ դրանք մի կողմից պետք է արտացոլեն կազմակերպության յուրահատուկ պահանջները, մյուս կողմից՝ կոհերենտություն հաղորդելով ամբողջ պետական ապարատում ընդգրկված պետական ծառայողների վարքագծի ոչ ֆորմալ (օրենսդրորեն չկարգավորվող) մասին, նպաստեն Պետության բարոյական բաղադրիչի ձևավորմանը: Ստորև ներկայացված են այդ բաղկացուցիչները:

**1. Հայրենասիրությունը** ծնունդ է առնում Արեալի և նրա տիրոջ ներդաշնակ միասնությունից, որպես արդյունք՝ բնական տեսակի և նրան տրված բնօրրանի ինֆորմացիոն փոխհարաբերություն: Այս է պատճառը, որ այն համարվում է գերագույն առաքինություն, քանի որ դրա վրա է խարսխված Տիեզերակառույցի ծավալման երկբևեռ պրոցեսի հավասարակշռման բնականոն մղումը: Որպես զգացում, այն արտահայտվում է ամբողջի մասը լինելով՝ ամբողջը պարփակելու ապրումով, ինչը իշխանական հարաբերությունները բնութագրող վարքականոնում կարելի է ձևակերպել՝ «Պետական տաճարի մասը լինելով՝ կրում ենք տաճարը ողջ» բանաձևային արտահայտությամբ:

**2. Պարտքի զգացումը**, որն ամբողջական բնույթ է հաղորդում իշխանական հարաբերություններում ներքաշված կառավարման սուբյեկտների և օբյեկտների փոխազդեցությանը: Այն նպաստում է անձնակազմում կոլեգիալության սկզբունքի վրա խարսխված մթնոլորտի ձևավորմանը, ինչը ենթակա-ղեկավար փոխներգործությունն անձնային հարթությունից տեղափոխում է անանձնական դաշտ, որտեղ ղեկավարը և ենթական (սուբյեկտն ու օբյեկտը) հոգեբանորեն ոչ թե տարանջատված և միմյանց հանդեպ հակոտնյա միավորներ են, այլ մեկ միասնական նպատակաուղղվածությամբ՝ ամբողջական հիերարխիա: Առանց պարտքի զգացումի գիտակցման ղեկավարումն ու կառավարումը դառնում են մարդկային ինքնությունը վիրավորող, այն ճնշող և դեգրադացնող գործիք, որի կիրառման շնորհիվ ենթական, անընդհատորեն իրեն պարտված զգալով, չի կարողանում իմաստավորել թե՛ իր և թե՛ ամբողջի գոյության տեղն ու դիրքը:

Արդյունքում՝ միջանձնային փոխազդեցություններով պայմանավորված իշխանական հարաբերությունների թաղանթը քայքայվում և ոչնչանում է:

**3. Պատվի ապրումը**, որի իմաստը օրենսդրությամբ սահմանված կանոնների իրագործման ենթակայական կախվածությունն է բարոյական չափանիշներից: Իշխանական հարաբերություններում այսպիսի արժեքային չափանիշի առկայությունը ենթադրում է, որ փոխներգործության ընթացքում կողմերը պարտավորվում են չփոփոխել իրենց մտադրություններն ու ուղենիշերը, ինչը իշխանական գործընթացն օժտում է փուլային, կայուն և կանխագուշակելի որակներով: Դիտարկված չափանիշը հնարավորություն է ընձեռում տարամետ կամային ձգտումների և գործողությունների բախումը դարձնել կանխագուշակելի և փոխազդեցությունում ներմուծելով դետերմինացվածություն՝ համակարգին հաղորդել նպատակամղվածություն:

**4. Արդարությունը**, ըստ բովանդակության, նախնյաց իմաստությունը օրինաչափել է էության եռամիասնական կառույցի հետ (գծապատկեր 1), և առանձին մարդու հոգում արդարության էությունը ճանաչելու համար այն պարզաբանել են պետության մեջ: Մասնավորապես, ներկայացնելով մարդկային հանրույթի (նաև էթնոսի) եռամիասնական բնույթը երեք կաստաների տեսքով՝ կառավարողներ, զինվորականներ և արտադրողներ, արդարությունը մեկնաբանվել է իբրև յուրաքանչյուր խմբի կողմից իրեն ներհատուկ զբաղվածության ապահովման գործընթաց և վիճակ:

Այնուհետև, պետության մեջ այդ երեք դասերը, համապատասխանեցնելով երեք հոգեմասերին (բանականություն, ոգեղենություն և մղումներ), արդարությունը ներկայացվել է որպես դրանց համակարգման գործոն և, ի տարբերություն երեք անհատական առաքինությունների, իմաստության, խոհեմության և արիության, համարվել է որպես հասարակական էմանացիա (ճառագում):

Հետևաբար, իշխանության հիերարխիկ և ոչ սիմետրիկ փոխհարաբերություններում արդարությունը հանդես է գալիս իբրև եզրագիծ, որի խախտումը սպառնում է իշխանության ամբողջական համակարգին. «Լավ իշխանությունը կնշանակի առողջ և զգույշ կերպով անարդարության կառավարում»<sup>4</sup>:

**5. Խիղճը կամ խղճմտանքը** առնչվում է բարու հասկացության հետ, որը, փիլիսոփայության մեջ համարվելով բարձրագույն գաղափար,

<sup>4</sup> Ա. Քանյու, «Նոթատետր»



ըմբռնվում է լայն իմաստով՝ «գոյին» առնչված, տիեզերական մակարդակով՝ իբրև գոյը պահող և կարգավորող սկզբունք: Երբ այդպիսին է հարցի գոյաբանական ըմբռնումը, ինքնին բխում է և իմացաբանական առաջադրանքը: Այսինքն՝ հոգևոր կատարելության շավղով դեպի արտաքին զարգացում: Այստեղից բխում է, որ հասարակական խղճմտանքը կարող է բխել օրենսդրությունից, ընդհակառակը՝ «պատմությունը հաստատում է, որ օրենքներն են հայելին հասարակական հոգու, որ պետական ռեժիմն արտացոլում է ժողովրդի խղճմտանքը»<sup>5</sup>: Երբ իշխանական փոխհարաբերություններում խախտվում է, բայց չի անտեսվում, արդարությամբ պայմանավորված եզրագիծը, ապա իշխանությունը գնահատվում է խղճմտանքի տեսանկյունից: Ահա թե ինչու, խղճմտանքի առկայությունը կարող է կանխորոշել հանրույթի կողմից իշխանության հանդեպ լիարժեք վստահությունն ու համակրանքը (լեգիտիմություն, ի տարբերություն լեգալության):

**6. Պատասխանատվությունը** ինչպես իշխանության կրողի (սուբյեկտի), այնպես էլ օբյեկտի կողմից, միմյանց փոխլրացնելով, ամբողջացնում են կառավարման գործընթացը և ստեղծում հասարակություն-պետություն փոխհարաբերություններում հետադարձ կապի ապահովման բարոյահոգեբանական նախադրյալներ: Վերջիններիս կողմից պատասխանատվության որդեգրումը հանգեցնում է կառավարչական գործընթացներում իշխանության կրողների և կառավարիչների կողմից թույլատրելիության սահմանների պահպանմանը և կարողություններին համարժեք գործողությունների ծավալման ունակությանը:

**7. Բարեպաշտությունը** նիստ ու կացի, վարք ու բարքի մեջ և, որ ամենազխավորն է խոսք ու բառի անաղարտության պահպանումը բազմապատկում է իշխանության բարոյական ներուժը: «Յուրաքանչյուր ժողովուրդ այնտեղ է, ուր նա հասել է իր բարոյական ուժերի մղումով»<sup>6</sup>: Ընդ որում, դա պետք է անել բացառելով ձևականությունը, աստիճանաբար դարձնելով հոգեբանական նկարագրի անտրոհելի մաս, քանի որ գոյության արտաքին պայմանները հարազատորեն կապված են ներքին հոգեկան դրության հետ, ապա հոգևոր ուժերի ավելացման այս ճանապարհով էլ իշխանությունը կարող է հասնել ժողովրդի գոյության պայմանների ան-

նախընթաց բարելավման:

*Ձուտ ծառայողական տեսանկյունից, կարելի է առանձնացնել միակերպ թեմաների հետևյալ շարքը՝*

- աշխատակիցների իրավունքներ,
- պետական ծառայությունում խտրականություն և հետապնդում,
- պարտականություններ, որոնք հակասության մեջ են գտնվում հավատքի և անձնական համոզմունքների հետ,
- որոշումների ընդունում,
- հասարակական մեկնաբանություններ,
- պաշտոնական տեղեկությունների օգտագործում,
- աշխատանք պետական սեկտորից դուրս,
- քաղաքական աշխատանք կամ շահեր,
- ծառայողների իրավունքների վերաբերյալ օրենսդրություն:

Օրենսգիրքը պետք է գործի որպես որոշումների ընդունման ակտիվ ձեռնարկ, ապահովի օրինակներ, որպեսզի պարզաբանվեն էթիկական հիմնախնդիրները, որոնց հետ անձնակազմը կարող է բախվել, և տալ դրանց լուծման եղանակները: Տվյալ պետական մարմնի հատուկ ուշադրության արժանի ոլորտները կամ ռիսկը պետք է մանրակրկիտ քննարկվեն և ընդգրկվեն օրենսգրքի մեջ: Օրենսգիրքը պետք է պարունակի նաև ընթացակարգի և կանոնների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, ինչպես նաև այն մասին, թե անձնակազմը ինչպես կարող է դիմել էթիկայի հանձնաժողովին, եթե նման տեղեկության համար կոնկրետ քննազավառում անհրաժեշտություն է ծագում:

Օրենսգրքում անհրաժեշտ է շեշտը հիմնականում դնել պետական հաստատությունում բարոյական մթնոլորտի ձևավորման վրա, այլ ոչ թե համաձայնության և կարգապահության:

Առաջնորդող սկզբունքները, որոնք սահմանված են հիմնականում բացասական արտահայտություններով, միտում ունեն ձևավորելու ժխտողական մթնոլորտ: Օգտագործելով անհատական երանգ, «ձեզ» և «մենք» կարգի դերանուններ՝ մենք ընդգծում ենք պատասխանատվությունը և օգնում ենք անձնակազմին օրենսգիրքն ընդունելու որպես փաստաթուղթ, որը վերաբերում է իրենց և իրենց կատարած աշխատանքին:

Խախտելով օրենսգիրքը՝ ծառայողները կարող են առնչվել կազապահական սանկցիաների կամ այլ հետևանքների:

<sup>5</sup> Գ. Նժդեհ, «Մետապոլիտիկա: Պատմության փիլիսոփայությունը»:

<sup>6</sup> Գ. Նժդեհ, «Մեծ գաղափար»:

Ղեկավարությունը պետք է պաշտպանի օրենսգրքի հիմնական արժեքներն ու անձնական օրինակ ցույց տա: Կարևոր է, որպեսզի ղեկավարները շարժվեն վարվեցողության նույն չափորոշիչներով, ինչ որ անձնակազմը: Անհրաժեշտ է ապահովել այնպիսի ուսուցում, որպեսզի անձնակազմի հետ էթիկական հարցերի քննարկումը դառնա ղեկավարի աշխատանքի կանոնավոր ու հաճելի մի մասը: Ղեկավարներին անհրաժեշտ է պատրաստ լինել մի ամբողջ շարք սանկցիաների կիրառման, եթե ծառայողները խախտում են Վարքի օրենսգիրքը՝ կախված նրանից, թե որքան լուրջ են խախտումները:

## Եզրակացություններ

Ինչպես նշվել էր, ներդաշնակ պետության կառավարման համակարգի ներդրման վերը ներկայացված ռազմավարությունը կարիք ունի մարտավարական որոշակի գործողությունների օժանդակության: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ իրականության մեջ առկա զարգացումները կարող են հանգեցնել ոչ դարձելի հետևանքների, ինչը վտանգում է հայ տեսակի գոյությունը ընդհանրապես: Այդ մարտավարությունը կարող է խարսխված լինել ստորև ներկայացված իրավիճակային առաջնահերթությունների վրա:

### 1. Գործադիր իշխանության քաղաքական օպտիմալացում

Այս առաջնահերթության տեսանկյունից որպես կարևորագույն սկզբունքներ են որդեգրվել՝

- արդյունավետ պետական կառավարման իրականացումը,
- պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը:

Առաջին քայլի իրականացման արդյունքում տեղի կունենա պետական կառավարման ապարատի աշխատակիցների թվաքանակի կտրուկ կրճատում, որը հիմնականում պայմանավորված կլինի նախարարությունների թվաքանակի կրճատմամբ:

1. Առկա 24 նախարարություններից կարելի է պահպանել ընդամենը 7-ը,
  - արտաքին գործերի նախարարություն,
  - ազգային անվտանգության և ներքին գործերի նախարարություն,
  - պաշտպանության նախարարություն,

- ֆինանսների նախարարություն (հարկային, մաքսային),
- էկոնոմիկայի նախարարություն (քաղաքաշինություն, սեփականաշնորհում, գյուղատնտեսություն, բնապահպանություն, տրանսպորտ, կապ, գիտություն, կրթություն, մշակույթ, առողջապահություն, սոցիալական ապահովություն),

- արդարադատության նախարարություն,
- վիճակագրության նախարարություն:

2. Մնացած գերատեսչությունները կարելի է լուծարել՝ դրանց խնդիրները վերապահելով 33 կառավարության աշխատակազմին՝ 30 %-ով կրճատելով այն ևս: Հնարավոր է կրճատել նաև 33 նախագահի և Ազգային ժողովի աշխատակազմերը 80 %-ով:

Ֆիսկալ քաղաքականության մեջ անհրաժեշտ է՝

- վերացնել բոլոր հարկերը որոշակի ժամկետով՝ թողնելով միայն մաքսատուրքը և ակցիզային հարկը (ոգելից խմիչքներ, բենզին, ծխախոտ), բարձրացնելով վերջիններիս դրույքաչափերը, դրա շնորհիվ կարելի է հարկային տեսչության աշխատակազմը կրճատել 95 %-ով,

- վերացնել ընդհանրապես ընտանեկան նպաստները,

- առողջապահությանը հատկացվող գումարները կրճատել մոտավորապես 85 %-ով (պահպանելով օպտիմալ թվով անվճար բուժօգնություն տրամադրող հիվանդանոցներ՝ պետական դոտացիաների հաշվին):

Իբրև առաջարկված հարկերի վճարումների վերացումից բյուջետային մուտքերի նվազեցման փոխհատուցման մջջոց՝ կարելի է կիրառել հաստատագրված վճարների համակարգը: Հաստատագրված վճարի սահմանման տարբեր եղանակներից առավել իրատեսական է թվում հետևյալ տարբերակը: Այն իրենից ներկայացնում է էկոնոմետրիկական մոդել /հավասարում/, որով ձեռնարկությունների կողմից պետական բյուջե մուծվելիք հարկերի ծավալը կախվածության մեջ է դրվում տվյալ ձեռնարկության գործունեությունը բնութագրող մի շարք ցուցանիշներից: Ընդ որում, այդ ցուցանիշները կարող են ինչպես ուղիղ, այնպես էլ հակադարձ կապ ունենալ հարկերի ծավալի հետ:

Որպես մոդելի կազմման բազա՝ օգտագործվել են ձեռնարկություններից ստացված վիճակագրական տվյալներ, մասնավորապես, հիմնական ֆոնդերի, աշխատողների թվաքանակի, տարեկան շրջանառության, շրջանառու միջոցների եւ այլնի վերաբերյալ: Մոդելը թույլ է տալիս, տիրա-

պետելով որոշակի տվյալների, ձեռնարկության համար սահմանել հաջորդ տարվա մուծվելիք հարկերի չափը, որոնք կարող են ճշգրտվել այդ տարվա փաստացի տվյալների հիման վրա:

Միաժամանակ, հնարավոր է տարեկան բյուջեն հաստատելիս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում սահմանել յուրաքանչյուր ճյուղի համար առանձին գործակիցներ, որոնք կկիրառվեն ձեռնարկության հարկային պարտավորությունները հաշվելու ժամանակ. այս եղանակով հնարավորություն կընձեռվի խորհրդարանականներին տնտեսության տարբեր ոլորտների համար վարել համապատասխան առավելությունների քաղաքականություն:

Այսպիսով, այս եղանակը հնարավորություն է տալիս լավագույնս կրճատել բնագավառում առկա սուբյեկտիվ գործոնը՝ միաժամանակ ունենալով հարկերի հավաքագրման գործընթացի նկատմամբ աներևույթ վերահսկողություն եւ հարկերի ծավալների կանխատեսելիություն: Այն հնարավորություն կտա նաև խուսափել արտահանման ժամանակ ապրանքների հարկումից:

Նշված մոդելը մաթեմատիկական հավասարման տեսքով ներկայանում է՝  
 $R=C_1*Ակ+C_2*ՀՄ+C_3*ԻՀ$

հավասարումով, որտեղ՝

Հ - ընկերության կողմից վճարման ենթակա հարկի ծավալն է,

Ակ - ընկերության ակտիվներն են,

ՀՄ - ընկերության հիմնական միջոցներն են,

ԻՀ - ընկերության հասույթն է իրացումից:

Իսկ  $C_1$ ,  $C_2$ ,  $C_3$  համապատասխան գործակիցները հաշվարկվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական ցուցանիշների հիմքի վրա, սակայն դրանց թվային արժեքների և հաշվարկի մեթոդաբանության ներկայացումը այս աշխատության շրջանակներից դուրս է:

Այս իրավիճակային գործողությունների կոնկրետ միջոցառումները ճշգրտելու համար անհրաժեշտ է դիտարկել պարզաբանման ենթակա հետևյալ հարցադրումները՝

ա) գնագոյացման մեխանիզմերը Հայաստանի Հանրապետությունում,

բ) դրամի ապահովվածության պարիտետը ԱՄՆ դոլլարից այլ հիմքի վրա տրանսֆորմացնելու հնարավոր մեխանիզմները՝ շեշտը դնելով սեփական ունեցվածքի վրա,

գ) արտասահմանյան վարկերի ցանկի ուսումնասիրությունը և հետագայում դրանցից խուսափելու հնարավոր մեխանիզմները,

դ) պետական ունեցվածքի հաշվառման անհրաժեշտության գնահատումը և իրականացման մեխանիզմները,

ե) առաջարկված փոփոխությունների հետևանքով գոյացած գործազուրկների սոցիալական խնդիրների պարզաբանումը,

զ) առաջարկված փոփոխությունները իրականացնելու համար անհրաժեշտ օրենքների ցանկի պարզաբանումը:

## 2. Տնտեսական ոլորտ

Անհրաժեշտ է ծայրահեղ սահմանափակ ռեսուրսները կոնցենտրացնել հանգամանորեն ընտրված ուղղություններով: Հաշվի առնելով, որ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը մեծապես կախված է տնտեսական համակարգի բնույթից, մարտավարական այս առաջնահերթության շրջանակներում անհրաժեշտ է *Տնտեսվարման կացութաձևը բնորոշել ոչ թե արտադրական միջոցների պատկանելության տեսանկյունից, այլ՝ արտադրության արդյունքում վերարտադրված կապիտալի բաշխման գործընթացում հասարակության մասնակցության աստիճանով և տրամաբանությամբ:*

Նրանք, ովքեր առաջնային պլան են մղում անհատական ազատության արժեքը, առավել դյուրին են հաշտվում աղքատության տարածման հետ, որը շատ հաճախ զուգակցում է բարեփոխումներին (մեր կողմից՝ Մոնետարիստներ), քան նրանք, ովքեր հարաբերական մախապատվությունը տալիս են սոցիալական համերաշխության և արդարության սկզբունքներին (մեր կողմից՝ Քեյնսականներ): Ջուլո գիտական առումով, պոստսոցիալիստական տրանսֆորմացիայի օպտիմալ ռազմավարության նկատմամբ տեսակետների տարանջատման համար հիմք է հանդիսանում գիտնականների հակվածությունը մի կողմից՝ մոնետարիստական հոսանքին, մյուս կողմից՝ նեոքեյնսյան և ինստիտուցիոնալ հոսանքներին: Արդյունքում՝ բանավեճի կենտրոնում են հայտնվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են տնտեսության լիբերալացման և պետական սեփականության պրիվատիզացիայի հրատապությունը, դրամավարկային և ֆինանսական քաղաքականության միջոցով ամբողջական պահանջարկի խթանման նպատակահարմարությունը, առանձին մրցակցային հաստատությունների

ձևավորումը: Ընդ որում՝ ինֆլացիայի և տնտեսական աճի պրոբլեմը երկու դեպքում էլ դիտարկվում է հիմնականում ամբողջական պահանջարկի տեսանկյունից: Մոնետարիզմի կողմնակիցները պոստսոցիալիստական երկրների անցման նախնական փուլում դիտարկվող գների աճը անմիջականորեն կապում են չափից ավելի ամբողջական պահանջարկի և միջնորդավորված կերպով արտադրության անկման հետ: Քեյնսականները, արձանագրելով արտադրական պոտենցիալի բեռնվածության աստիճանի կտրուկ անտուճը, այն բացատրում են ամբողջական պահանջարկի դեֆիցիտով և համապատասխանաբար առաջարկում են վերջինիս խթանումը իրականացնել ֆիսկալ և մոնետար քաղաքականության մեթոդներով: Երկու դեպքում էլ անուշադրության է մատնվում մրցակցային մեխանիզմների թողարկման արդյունքում սկսվող ռեսուրսների մասշտաբային վերաբաշխման (վերալուկացման) գործընթացը: Յենց այս գործընթացն է հանդես գալիս իբրև «առաջարկի կողմից շոկի» յուրօրինակ տարատեսակ, ինչն էլ հանգեցնում է ինչպես չբեռնված հզորությունների առաջացմանը, այնպես էլ՝ մեկնարկային գների աճին: Այս պայմաններում կոշտ ֆինանսական քաղաքականության միջոցով ինֆլացիայի դադարեցմանն ուղղված բոլոր փորձերը կհանգեցնեն արտադրության կտրուկ անկման: Ընդհակառակը, ամբողջական պահանջարկի խթանումը ավելի շուտ հանգեցնում է գների աճի, քան՝ արտադրության մեծացման: Մուտանտային, քվազիմրցակցային համակարգին, որպիսին այսօր մեր տնտեսական համակարգն է, հատուկ է ֆինանսական և արտադրական ոլորտների միջև չտեսնված խզվածությունը, տնտեսության իրական հատվածում կապիտալի վերարտադրության և տոկոսադրույքի մակարդակի միջև կապի բացակայությունը, վերջինիս դեմոնետիզացիան:

«Տեխնիկական» տեսանկյունից, հայրենական տնտեսությունը նորմալ մրցակցային ռեժիմի գործառնության հարթություն տեղափոխելու համար անհրաժեշտ է, որ իշխանության բոլոր մակարդակներում կիրառվեն կառավարման այն մեթոդները որոնք համատեղելի են մրցակցային տնտեսվարման համակարգի հետ: Անհրաժեշտ է գործել երկու ուղղություններով: Առաջինը այնպիսի իրավական մեխանիզմների ներդրումն է, որոնք գործնականորեն հնարավորություն կընձեռեն բաժնետերերին իրականացնել սեփականատիրոջ գործառնությունները, ինչպես նաև՝ փոքր քանակի բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերի իրավունքների պաշտպա-

նությանը ուղղված միջոցառումներ: Երկրորդ ուղղության էությունը պետության կողմից իր ակտիվների հիմնական մասի կառավարման մրցակցային բնույթը երաշխավորող համակարգի ներդրումն է: Այս խնդրի վճռումը, թերևս, հնարավոր է իրագործել գործադիր իշխանության մարմիններից անկախ ինվեստիցիոն-հոլդինգային (և կամ մի շարք նման) ընկերությունների ձևավորմամբ:

Տնտեսության իրական հատվածի ոչ լիկվիդայնությունը հանգեցրել է մրցակցային մեխանիզմների տապալմանը, հենց այս պատճառով տնտեսության մոնետարիզացիան հանդիսանում է համակարգային բնույթի միջոցառում: Ֆինանսական խոռոչների ռադիկալ մաքրման այլընտրանք չկա: Դա հնարավոր է իրականացնել համընդհանուր մարման (ստուգարքի) օգնությամբ, որի հիմնախարիսխը պետք է լինի հաստատված ժամանակահատվածում տնտեսվարող սուբյեկտների և պետական մարմինների կողմից ուշացված պարտքերից հաշվեկշիռների մաքրումը (գոյականացումը): Այս պարագայում այն տնտեսվարող սուբյեկտների հաշվարկային հաշիվները, որոնց դեբիտորական պարտքերը կգերազանցեն կրեդիտորական պարտքերին, պետք է վերակրեդիտավորվեն որոշակի գումարով, իսկ այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց կրեդիտորական պարտքերը կգերազանցեն դեբիտորական պարտքերին, միակ կրեդիտորի դերում պետք է հանդես գա պետությունը, որին և պետք է վերապահվի այդ սուբյեկտների հետագա ճակատագրի վճռումը: Ընդ որում, պետք է բացառել պետության կողմից իրեն տրամադրված ապրանքների և ծառայությունների դիմաց չվճարումների հնարավորությունը: Այդ նպատակով լիովին արդարացված կլինի, մասնավորապես, օրենսդրորեն այնպիսի կարգի ներմուծումը, որի դեպքում, եթե կառավարությունը չի վճարում և չի կարողանում քաղաքակիրթ եղանակով ամրագրել իր պարտքերը, մեքենայորեն գործի մեջ է մտնում դրամի տպագրությունը:

### *Յողի շուկա*

Միանտություն կլինի կարծել, թե Յայաստանում կարելի է անմիջապես ներդնել հողի առք ու վաճառքի կարգավորման իդեալական համակարգ: Միևնույն ժամանակ, հայտնի են խնդրի վճռման դրական կողմերը, երբ բնական ռեսուրսների շրջանառությունը կառուցվում է վարձակալության հիմքի վրա (հողի քաղաքացիական շրջանառության համակարգ): Մեր

պարագայում, պետությունը կարող է և պետք է բնական ռեսուրսների օգտագործումից ստացված վարձավճարով փոխարինի բյուջեի ավանդական հարկային մուտքերի մեծ մասը: Այս փաստարկի հիմնավորումն այն է, որ, ի տարբերություն հարկատեսակների մեծ մասի, ռենտային վճարները չեն հանգեցնում արտադրական թողարկման նվազեցման: Հենց այդ պատճառով իրական խնդիր է հանդիսանում ոչ թե հողի առք ու վաճառքը օրենսդրորեն սահմանափակումներից ձերբազատելը, այլ՝ չինովնիկների կամայականություններից և կոռուպցիայից զերծ, պետության կողմից բնական ռեսուրսները վարձակալության հանձնելու արդյունավետ համակարգի ստեղծումը, այս համատեքստում ընդերքի սեփականաշնորհումը ուղղակիորեն պետք է արգելվի:

### *Դրամա-Ֆինանսական համակարգ*

Ինչպես վկայում է աշխարհի փորձը, մրցակցային տնտեսությունը համատեղելի է բավականին լայն սպեկտրի դրամա-ֆինանսական ենթակառուցվածքային մոդելների հետ, ինչը հնարավորություն է ընձեռում այն ձևավորելու ընթացքում հաշվի առնել տվյալ երկրի յուրահատկությունը: Մեր պարագայում հատուկ նշանակություն են ձեռք բերում արտաքին պարտքերի մարման համար անհրաժեշտ արտարժույթային միջոցների պետական կարիքները, ինչպես նաև ՀՀ ֆինանսական ինստիտուտների բավականին երկարատև ու անխուսափելի թուլության հաղթահարումը: Նախորդ տարիների բարեփոխումների ընթացքում դրամը շատ սահմանափակ կերպով է բավարարել այն գործառույթներին, որոնք հատուկ են լիարժեք ազգային արժույթին: Մի կողմից՝ այն հանդես է գալիս որպես փոխադարձ չվճարումների և տնտեսության իրական հատվածում ապրանքների ու ծառայությունների շրջանառությունից դուրս մղված փոխանակման միջոց: Մյուս կողմից՝ գնի պահպանման գործառույթի և մասնակիորեն դրամաշրջանառությունում որպես միջոց հանդես գալու իմաստով, արտերկրյա տարադրամը ամբողջովին փոխարինել է դրամին: Դրամը վերածվել է դոլլարի ներկայացուցչի այն նույն իմաստով, ինչպես ոսկու ստանդարտի ժամանակշրջանում թղթադրամը հանդիսանում էր ոսկու նշան: Առաջարկվող, այսպես կոչված, տարադրամային կառավարման (currency board) ներմուծումը նպատակ ունի վերջնականորեն ավարտելու այս գործընթացը:

Հայաստանը չի կարող և չպետք է հրաժարվի սեփական դրամային սուվերենությունից: Ընդհակառակը, հարկավոր է ձգտել աստիճանաբար ստեղծել այնպիսի պայմաններ, որ դրամը վերածվի հաշվառման հիմնական միջոցի: Այսպիսով, մեր առջև կանգնած է երկակի խնդիր՝ դրամի գործողության տարածումը ամբողջ տնտեսության վրա և դրամի միջոցով փողի բոլոր գործառույթների կատարման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, վերջինիս կուրսի կայունության ապահովումը:

Խնդրի առաջին մասի վճռման է ուղղված վերը հիշատակված՝ ուշացված պարտքերի հանընդհանուր ստուգարքը: Խնդրի երկրորդ մասի իրագործումը կապված է արտերկրյա արժույթի՝ որպես սպեկուլյատիվ ակտիվի հանդեպ պահանջարկի վերացման հետ: Երկրի ծանր ֆինանսական վիճակի և ֆինանսական ենթակառուցվածքների ոչ հասուն պայմաններում դրամ հնարավոր է հասնել միայն իրավաբանական անձանց համար դրամի ներքին շրջանառությունը բացառապես հաշվարկային հաշվեկշռի ընթացիկ հողվածներին համապատասխան գործողություններով սահմանափակելով: Այլ խոսքով, նպատակահարմար կլինի, որ Կենտրոնական բանկի առաջարկությամբ իրավաբանական անձանց համար ներդրվի արտահանումից ձեռքբերված ողջ շահույթի արտարժույթային մասի պարտադիր վաճառքը արտարժույթի շուկայում: Ընդ որում, գոյություն ունեցող տարադրամային հաշիվները (Լեհաստանի օրինակով) կարելի է պահպանել՝ բացառելով դրանց հետագա մուտքերը: Շուկայում արտարժույթի ձեռք բերման իրավունքը պետք է տրվի միայն պարտքերի մարման պարտավորության և կնքված ներմուծման պայմանագրերի կատարման դեպքում:

Հարկ է, որ գործադիր իշխանությունը մաքսիմալ արագությամբ ձեռնարկի արտաքին պարտքերի մարման համար անհրաժեշտ հատուկ արտարժույթային հիմնադրամի ձևավորումը (հաշվի առնելով ոչ միայն ընթացիկ վճարները, այլ նաև, «վերելքի» փուլերում պարտքերի մարման համար անհրաժեշտ ռեզերվների ստեղծումը): Այս հիմնադրամի մուտքերն ապահովելու համար անհրաժեշտ տարադրամի պետական պահանջարկը կսահմանափակի դրամի չափից ավելի ամրապնդման միտումը, և դրանով իսկ կնվազեցնի Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի գնման «չափից դուրս» պահանջարկը: Ինքնին հասկանալի է, որ վերոհիշյալ հիմնադրամի միջոցների կառավարումը պետք է իրականացվի ՀՀ պե-

տական գանձապետարանի կողմից:

### *Ֆինանսական ինֆրակառուցվածքի կատարելագործումը*

Ֆինանսական ինստիտուտների ոլորտը «ռադիկալ բարեփոխումների» ողջ ընթացքում գտնվել է անմխիթար վիճակում և չի կատարել իր հիմնական գործառնությունը, որի էությունը խնայողությունների փոխակերպումն (տրանսֆորմացիան) է ներդրումների: Հայկական ֆոնդային բորսան կրում է դեկորատիվ բնույթ, ոչ մի կերպ չի վերականգնվում միջբանկային կրեդիտային շուկան, ծայրաստիճան սահմանափակ են կարճաժամկետ կրեդիտների մասշտաբները, իսկ տնտեսության իրական սեկտորում երկարաժամկետ վարկերը փաստացիորեն բացակայում են: Առևտրային բանկերի և այլ ֆինանսական միջնորդների ակտիվ գործունեությունը մինչ այժմ հանգել է միայն պետական արժեթղթերի և արտարժույթի մեջ ներդրումների:

Վերը նկարագրված պատկերի հիմնական պատճառները գտնվում են ֆինանսական ոլորտից դուրս, վերջինիս կտրվածությունը իրական տնտեսությունից պայմանավորված է տնտեսվարման համակարգի արմատական ձևափոխումներով: Դժվար է պատկերացնել, որ նորմալ բանկը կարող է վարկավորել ոչ լիկվիդային արտադրական միավորների: Միևնույն ժամանակ, հարկավոր է նկատի ունենալ, որ տնտեսության տեղափոխումը իրական մրցակցային հարաբերությունների հարթություն ընդամենը հանգեցնում է արդյունավետ ֆինանսական ինֆրակառուցվածքի ձևավորման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծմանը: Մինչդեռ բարդ խնդիրներ են այս սեկտորի ֆինանսական առողջացումը, նրա ներսում աշխատանքի ռացիոնալ բաժանումը և միջազգային ֆինանսական համակարգի հետ վերջինիս փոխազդեցության ճշգրիտ բնույթը:

Հայաստանի ներկա պայմաններում պատկերանում է գործողությունների հետևյալ ալգորիթմը:

Անհրաժեշտ է շարունակել բանկային համակարգի ֆինանսական առողջացման գործընթացը բանկային գործունեության նկատմամբ պահանջների խստացման առումով: Ուշացված պարտավորությունների համընդհանուր ստուգարքը կարող է էապես թեթևացնել այդ գործընթացի իրագործումը, քանի որ ստուգարքի արդյունքում բանկերի մեծ մասի համար կստեղծվեն ֆինանսական առողջացման իրական նախադրյալներ:

Մասնավորապես, իրական տնտեսության լիկվիդայնության կտրուկ աճը կհանգեցնի վերջինիս վարկավորման մասշտաբների մեծացման: Բանկային համակարգի ռեկապիտալիզացիայի ուղղությամբ գործադիր իշխանության ջանքերը պետք է զուգակցվեն ամենատարբեր օգնությունների տրամադրմամբ այն հայկական բանկերին, որոնք ձգտում են կարգավորել իրենց պարտավորությունները արտերկրյա ֆինանսական հաստատությունների նկատմամբ:

Հարկ է կիրառել այնպիսի համալիր միջոցառումներ, որոնց արդյունքում առևտրային բանկերի հիմնական ներդրումային գործառնությունը կդառնա տնտեսվարող սուբյեկտներին կրեդիտային հիմունքներով շրջանառու կապիտալի տրամադրումը: Ինչ վերաբերում է երկարաժամկետ վարկերին, ապա վերջիններիս իրագործման ֆինանսական միջնորդների դերում պետք է հանդես գան ինվեստիցիոն, կենսաթոշակային և ապահովագրական հիմնադրամները:

Անհրաժեշտ է վերանայել կոմերցիոն բանկերի կողմից հայրենական և արտերկրյա ընկերությունների բաժնետոմսերում ներդրումների հանդեպ վերաբերմունքը: Քանի որ բաժնետոմսերը չեն դասվում լիկվիդային ֆինանսական գործիքների կարգին՝ վերջիններիս ներհատուկ գնաչափի լայն ամպլիտուդներով տատանումների հետևանքով, հենց այս պատճառով ակտիվներում դրանց չափից ավելի մասնաբաժինը կարող է էապես նվազեցնել բանկի հուսալիությունը:

### *Արդյունաբերական համակարգը*

Հանրապետությունում կուտակված տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից առանձնապես կարևորվում է նոր իրողություններին համահունչ՝ արդյունաբերության զարգացման մարտավարական ծրագրի մշակման և իրականացման անհրաժեշտությունը: Ծրագիր, որը ենթադրում է սահմանված նպատակներին հասնելու համար տնտեսական, իրավական և վարչական լծակների գործադրմամբ անհրաժեշտ միջոցառումների համալիր, նպատակասլաց և, որ առավել կարևոր է, հետևողական իրականացում:

Ծրագիրը կարող է բաղկացած լինել հետևյալ երկու փուլերից.

I Փուլ. Ներքին արտադրությամբ ներմուծման փոխարինում:

II Փուլ. Արտահանման խրախուսում:

**Ներքին արտադրությամբ ներմուծման փոխարինում.** Այս փուլում արդեն իսկ ձեռք են բերվել որոշակի հաջողություններ, մասնավորապես՝ ծխախոտի, գարեջրի, սննդամթերքի որոշ տեսակների և այլ ապրանքատեսակների գծով: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ դեռևս առկա են բավականաչափ ռեսուրսներ, մասնավորապես՝ սննդամթերքի, քիմիայի և դրա հետ կապված արտադրանքի, մանածագործական իրերի, կոշկեղենի և այլ ապրանքատեսակների գծով: Գերքին արտադրությամբ ներմուծման փոխարինման 150-200 մլն ԱՄՆ դոլարի ռեսուրսներ են առկա: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ներքին շուկայի պաշտպանության և հայրենական արտադրողին աջակցելու համալիր միջոցառումներ մշակել և իրականացնել, մասնավորապես.

- ներմուծվող որոշ ապրանքատեսակների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի դրույքաչափերի վերանայում (Մաքսատուրքերի սահմանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ),

- ներմուծվող ապրանքների (հատկապես սննդամթերքի) սերտիֆիկացման, լիցենզավորման և որակի նկատմամբ ներկայացվող պահանջների խստացում,

- հայրենական արտադրողներին արտոնյալ պայմաններով վարկավորման հնարավորության ստեղծում,

- հարկային բեռի թեթևացում և այլն:

Ներմուծման փոխարեն ներքին արդյունաբերության խթանման ֆինանսական ապահովվածությունը կարելի է պայմանավորել՝

- կիրառելով արտոնյալ վարկային ծրագրեր (նույնիսկ բյուջեի հաշվին),

- ստեղծելով «սեպարատիվ խրախուսման ֆոնդ», որի մուտքերը պետք է զոյանան արտադրական կառույցների սեփականաշնորհումից (նույնպիսի մոտեցումը կիրառելի է նաև մյուս ոլորտներում, օրինակ՝ «Սոցիալական ապահովության սեպարատիվ ֆոնդ», «Էներգետիկայի սեպարատիվ ֆոնդ» և այլն),

- տարբեր ներմուծվող և արտահանվող ապրանքների նկատմամբ կիրառել տարբեր մաքսային դրույքաչափեր՝ ելնելով հայրենական արտադրանքի տեսականուց և ծավալներից,

- թեթևացնելով հարկային բեռը (հետևաբար՝ ընդլայնելով հարկման դաշտը)՝ առավելագույնս պարզեցնել հարկման մեխանիզմները,

- պարենային արտադրության (գյուղատնտեսության) և թեթև արդյունաբերության գերակա խթանում:

**Արտահանման խրախուսում.** Հայաստանի Հանրապետության ներքին շուկայի բավականին սահմանափակ լինելու պայմաններում, արդյունաբերության զարգացման տեսանկյունից, առավել կարևորվում է արտահանման ուղղված ճյուղերի խրախուսման և աջակցության քաղաքականության իրականացումը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում արտահանման պոտենցիալ ունեցող ճյուղերի թվին կարելի է դասել հետևյալ ճյուղերը.

- լեռնամետալուրգիա,
- քիմիական արդյունաբերություն,
- ակնագործություն և ոսկերչություն,
- մեքենաշինություն,
- թեթև արդյունաբերություն,
- վերամշակող արդյունաբերություն,
- ծրագրային ապահովում:

Վերը նշվածի իրականացման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել արտահանման խրախուսման համալիր ծրագիր: Ծրագիրը պետք է բաղկացած լինի հետևյալ միջոցառումներից.

- արտահանման խրախուսման կառույցի ստեղծում,
- արտահանման ֆինանսավորման համակարգի ստեղծում,
- արտահանման կադրային ներուժի ձևավորում,
- արտահանման մարքեթինգային համակարգի ստեղծում,
- արտահանման ընթացակարգերի պարզեցում,
- արտահանման իրականացման մասնավոր կառույցների ձևավորման նկատմամբ պետական աջակցություն,
- արտահանող ընկերություններին հարկային պարգևավճարների տրամադրման մեխանիզմի ձևավորում:

Արդյունաբերության զարգացման մարտավարական ծրագրի իրականացման համատեքստում է անհրաժեշտ դիտարկել փոքր և միջին ձեռնարկությունների աջակցմանը և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորմանն ուղղված համապատասխան քաղաքականության իրականացումը:

Այս իրավիճակային գործողությունների կոնկրետ միջոցառումները

ճշգրտելու համար անհրաժեշտ է դիտարկել պարզաբանման ենթակա հետևյալ հարցադրումները՝

- Չայաստանի Հանրապետության արդյունաբերական պոտենցիալի գնահատում,
- Երեքին արտադրությամբ ներմուծման փոխարինման և արտահանման պոտենցիալի գնահատում,
- Չայաստանի Հանրապետության ներդրումային անբարենպաստ միջավայրի պատճառների բացահայտում,
- միջին և փոքր ձեռնարկությունների զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտում:

Ներդրմանը էապես խանգարում է լարված քաղաքական իրավիճակը՝ հանգեցնելով իրավունքի սուբյեկտի կողմից օրենքի հանդեպ ցուցաբերած կամայական վերաբերմունքին, ինչը կարելի է կարգավորել «օրենքի դիկտատուրայի» միջոցով:

### *Սոցիալական ոլորտ*

Իշխանական համակարգն ունի գոյատևման և կայացման իր մեխանիզմները, որոնք գործում են բոլոր պետություններում՝ անկախ նրանց էթնոքաղաքականությունից: Ի տարբերություն ազգային կենսակերպի, սոցիալականը օժտված է համասեռությամբ:

Հանրությոն կազմված է դասերից, շերտերից, ենթաշերտերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր շահերն ու դրանց արտահայտչամիջոցները, որոնք ներկայացվում են հաճախ ամբողջ ազգի անունից, սակայն իրականում հանդիսանում են հասարակության այս կամ այն մասի շահերը: Դրանց տրոհվածությունն արտացոլվում է սոցիալական գիտակցությունում, ինչը, խաթարելով միասնությունը, նպաստում է հակադրությունների և հակասությունների աճին: Այսօր Չայաստանում քաղաքացիների սոցիալական գիտակցությունը ձևավորվում է խիստ տնտեսական բևեռացման պայմաններում, ինչը ոչ մի կերպ չի նպաստում ժողովրդի բարեկեցությանը և ծնունդ է տալիս ցնցումների, որոնք սպառնում են քաղաքական իշխանության կայունությանը: Ժողովրդի բարեկեցության բարձրացումը մեծապես կախված է հասարակական գիտակցությունից, պետական շահերի ընդհանրական ընկալումներից: Քանի որ ընդհանրական գիտակցությունն անհնար է առանց իրական միասնության, ապա պետու-

թյան սոցիալական քաղաքականությունը հարկ է համարել գերակա մարտավարական ուղղություններից մեկն ու այն պետք է ուղղված լինի *որակական և քաղաքական առավել ազդեցիկ հասարակական խավերի ձևավորմանը, որոնք դուրս են սոցիալական դիմակայություններից*: Հասարակագիտական մտքի պատմության մեջ այդպիսի դասն անվանվում է երրորդ կամ միջին խավ, որն էլ հենց հանդիսանում է քաղաքական իշխանության ամրության երաշխիքը:

Ստացվում է, որ մի կողմից ակնկալում ենք ընդհանրական հասարակական գիտակցություն՝ հանուն պետության խնդիրների լուծման և մասնավորապես ազգային օրգանիզմի նյութական ոլորտում բարեկեցության, իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ ենք համարում պայմաններ ստեղծել դրա ձևավորման համար:

Ինչպե՞ս դուրս գալ այս շրջապատույտից: Լուծումը թվում է պարզ՝ անհրաժեշտ է հենվել ազգային կենդանի գիտակցության վրա: Դրա ընդգրկումը, որպես սոցիալական քաղաքականության գործիքի, հնարավորություն կտա առաջին հերթին ստեղծել պետականության կայացման համար անհրաժեշտ միասնական մեխանիզմ, երկրորդ հերթին՝ հաստատել նրա ազգային բնութագիրը (*տվյալ դեպքում միայն սոցիալական մակարդակում*), այսինքն այն, ինչ պետությունը ստեղծվել է հանուն հասարակական շահերի պաշտպանության՝ որպես ազգի ինքնագիտակցության նյութական իրացում: Առանց ազգային և սոցիալական կենսակերպի սկզբունքների նմանօրինակ միավորման անհնար է հայկական պետության կայացումը:

Ասվածին համապատասխան՝ վերոհիշյալ սինթեզի հիմնական արդյունքը պետք է լինի համապարփակ բնույթի սոցիալական քաղաքականության արմատավորումը:

*Սոցիալական քաղաքականության համապարփակությունը* ենթադրում է, որ սոցիալական քաղաքականության օբյեկտի դերում չեն կարող հանդես գալ առանձին սոցիալական անապահով շերտերը կամ կարող են հանդես գալ իբրև մյուսներից առավել շատ պետության հոգածության կարիք ունեցող քաղաքացիներ: Սոցիալական քաղաքականության շրջանակներում գործունեությունը պետք է իրականացվի ամբողջ հասարակության հետ (ենթադրվում է՝ ամբողջ ազգի հետ), որն իր համար առանձնաշնորհի պետք է համարի ազգի բարեկեցությունը: Նմանօրինակ լայն



խնդրի դրվածքը ենթադրում է համակողմանի վճռում: Անհրաժեշտ է սոցիալական ապահովության պետական կառավարման հաստատության գործունեությունը առաջին հերթին համատեղել գաղափարախոսական ինստիտուտների հետ՝ պայմանավորված կրթության և գիտության, մշակույթի պետական կառավարման հաստատությունների գործունեությամբ:

Ակներևաբար, սոցիալական ոլորտի պետական կառավարումն իրականացնող հաստատության գործունեությունը չպետք է սահմանափակվի անապահով քաղաքացիների, հաշմանդամների, թոշակառուների, մանկատուն-ինտերնատների երեխաների, միայնակ մայրերի, բնակչության խոցելի խավերի հետ աշխատանքով միայն:

Վերջինիս պարտականությունների թվում պետք է լինի նաև հասարակության մնացած մասի հետ աշխատանքը: Այդ նպատակի իրագործումը հնարավոր է կյանքի կոչել՝ իրավաբանորեն ներառելով հասարակական բոլոր խավերին սոցիալական ոլորտ: Այս իմաստով հատկանշական է վերջերս ընդունված «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը, որը թույլ է տալիս նշված ուղղություններով համակարգել աշխատանքները՝ բարեգործների առջև դնելով նրանց վերապահված խնդիրները, սահմանելով բարեգործ և բարեգործություն հասկացությունները՝ բնութագրելով վերջիններիս գործունեության տնտեսական խթանները, իրավունքներն ու պարտականությունները: Բարեգործական գործունեության և ուղղվածության նպատակով սոցիալական ոլորտի պետական կառավարումն իրականացնող հաստատությանն առընթեր ստեղծել բարեգործների *խորհուրդ*, որը կարող է գործել հասարակական սկզբունքներով, իսկ անհատական կազմում նախևառաջ պետք է ընդգրկվեն արդեն գործող բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Սոցիալական օգնության օբյեկտների թվում կարող են լինել թոշակառուները, հաշմանդամները, միայնակ մայրերը, երեխաները, երեխաների առանձին խմբեր: Հնարավոր է սոցիալական միջոցներից աշխատող կանանց՝ տղամարդկանցից առավել շատ վճարման համակարգի ներդրում, սակայն անթույլատրելի է ընտանեկան նպաստների վճարումը:

Բյուջետային ֆինանսավորման իրացման արդյունավետության և ազգային գիտակցության վրա ազդեցության ոլորտում քարոզչության հաջողության նպատակով անհրաժեշտ է ներդնել սոցիալական ապահովության ոլորտում բյուջետային միջոցներից սոցիալական ոլորտի սպա-

սարկման առավել թափանցիկ համակարգ:

Մասնավորապես, կարելի է ներդնել մեկուսացված (սեպարատիվ) ֆինանսավորման համակարգ, որի էությունն այն է, որ սոցիալական ոլորտի ոչ արտադրական ձեռնարկությունների գործունեությունից, ինչպես նաև աշխատատեղերի կրճատումից բյուջե մուտքագրված սոցիալական ապահովության և այլ վճարումները օրենսդրորեն նպատակաուղղվեն բացառապես քաղաքացիների սոցիալական պաշտպանության ապահովմանը:

Սոցիալական քաղաքականության հիմնադրույթներից է գործազրկության մեղմացումը: Քանի որ գործազրկության խնդրի միակ իրական լուծումը արտադրության ակտիվ գործադրումն է, իսկ իրական գործազրկության մասին ճշգրիտ տեղեկատվության բացակայության և պետական հատվածում թափուր պաշտոնների առկայության մասին տեղեկատվության բացակայության պայմաններում աշխատանքի տեղավորման ծառայությունները ոչ մի կերպ չեն արդարացնում իրենց, դրանց վրա ծախսված միջոցները կարելի է համարել ապարդյուն:

Հետևաբար, սոցիալական ոլորտի պետական կառավարումն իրականացնող հաստատության գործունեությունը պետք է ուղղված լինի նաև գործազրկության և թափուր տեղերի մասին ճշգրիտ տեղեկատվության կառավարմանն ու համակարգմանը:

#### 4. Արտաքին քաղաքականության ոլորտ

Իրական աշխարհաքաղաքական պատկերը ձևավորվում է երկու գործոնների վերադրումից: Գործոնների առաջին խումբը պայմանավորված է քաղաքական շահերի օբյեկտիվ բաշխվածությունից՝ գլոբալ, տարածաշրջանային և տեղային կտրվածքներում այս կամ այն երկրի կողմից որդեգրած արտաքին քաղաքականության ռազմավարությամբ ու մարտավարությամբ: Ակնհայտ է, որ դրանց հիմքում ընկած են բազմաթիվ գործոններ. աշխարհագրական դիրքը, էթնիկ կազմը, տնտեսական և ռազմական պոտենցիալները, բնական ռեսուրսները, հաղորդակցության համակարգը, ազգային նպատակները, քաղաքական փորձը, պատմական անցյալը և այլն:

Գործոնների երկրորդ խումբը պայմանավորված է հասարակական հարաբերությունների բազմադարյա ընթացքում արդեն իսկ կայացած մի-

ջազգային դիվանագիտական և այլ կառույցներից բաղկացած համակարգով: Այս համակարգի տեսանկյունից աշխարհը դիտվում է որպես բազմաթիվ բլոկներից կազմված, այսինքն՝ ներքին մեծ բազմազանությամբ օժտված, *կառավարման ենթակա օբյեկտ*: Անկասկած, այս համակարգն ունի աշխարհի՝ իր կողմից ընդունելի մոդելը և, ելնելով ուժերի ու շահերի օբյեկտիվ դիմամիկայից (գործոնների առաջին խումբ), իր շտկումներն է մտցնում՝ աշխարհն աստիճանաբար մղելով դեպի «Նոր աշխարհակարգ»: Ակնհայտ է, որ կառավարման գործընթացի հեշտացման նպատակով վերոհիշյալ համակարգը պետք է փոքրացնի կառավարման ենթակա պարամետրերի թիվը, այսինքն՝ բլոկների խմբավորման և վերախմբավորման ճանապարհով կառավարման օբյեկտը (աշխարհը) պետք է մղվի դեպի նվազ բազմազանություն, իսկ ավելի ճիշտ՝ դեպի միօրինակություն: Յետևաբար, «Նոր աշխարհակարգի» ներքին տրամաբանությունը ուղղակիորեն ածանցված է կառավարման գործընթացի ունիվերսալ գործառույթներից: Ահա այդ գործառույթների արտաքին դրսևորումների ակամատեսներն ենք վերջին տասը տարիներին: Դրսևորումներ, որոնք կրում են տարբեր ծածկանուններ («Համընդհանուր եվրոպական տուն», «Պերեստրոյկա», «Գլոբալ անվտանգություն», «Ազատ տնտեսական գոտի» և այլն), սակայն ծառայում են մինևույն նպատակին:

Ինչպիսի՞ ընտրություն պետք է կատարի այս պայմաններում Հայաստանն արտաքին քաղաքականության բնագավառում:

Գործոնների առաջին խմբի տեսանկյունից, խնդրի լուծումը կախված է նրանից, թե Հայաստանն անմիջականորեն ինչպիսի՞ տեղ է գրավում նրան առնչվող պետական-քաղաքական շահերի ծրագրերում: Այս առումով, պետք է ունենալ տարածաշրջանի հստակ քաղաքական պատկերը, նրա հավանական զարգացումներն ու դրանց նկատմամբ աշխարհաքաղաքական ուժերի հավանական դիրքորոշումները:

Հայաստանի քաղաքական կարգավիճակն ունի երկակի բնույթ: Մի կողմից, այն կարող է դիտվել իբրև առանձին քաղաքական միավոր, մյուս կողմից՝ իբրև Հարավային Կովկասի՝ որպես մեկ միասնական բլոկի բաղկացուցիչ մաս: Գնահատելով այն՝ հանգում ենք հետևյալին:

Հայաստանը հնագույն պատմական և մշակութային ժառանգություն ունեցող երկիր է և այսօրվա գնահատմամբ գտնվում է քաղաքակրթական խաչմերուկներում: Սահմանակից է թշնամաբար տրամադրված Թուրքիա-

յին, Ադրբեջանին, անհաստատ և անվստահելի վարք ունեցող Վրաստանին և լոյալ Իրանին: Դարասկզբի քաղաքական իրադարձությունները Հայաստանին զրկեցին իր տարածքների մեծ մասից: Քսանական թվականներից հետո էլ Հայաստանը պարտադրված եղավ Ադրբեջանին զիջել տարածքներ, այնպես որ հավիտենական պահանջատեր է և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի, և՛ Վրաստանի նկատմամբ:

Կոմունիկացիաների տեսակետից գտնվում է փակուղային վիճակում: Ստրատեգիական հետաքրքրություն ներկայացնող հունքային ռեսուրսներ չունի: Չունի նաև էներգառեսուրսներ: Ունի բավականին բարձր, բայց ձևախեղված տնտեսական և մտավոր պոտենցիալ: Ռազմական պոտենցիալը ձևավորման մեջ է:

Ունիտար պետություն է: Ներքին քաղաքական հակամարտություններն ավելի շուտ թվացյալ են և թույլ: Ունի սփյուռք, որի կազմակերպվածության աստիճանը զրոյականին մոտ է:

Տնտեսական, ռազմական և քաղաքական խիստ կախվածության մեջ է Ռուսաստանից:

Այսպիսով, արտակարգ կարևորություն է ստանում գործոնների երկրորդ խումբը, որոնք, ճիշտ օգտագործելու դեպքում հնարավորություն է ստեղծվում այլոց շահերի դասավորությունից և նրանց միջև պոտենցիալ և իրական հակամարտություններից սեփական օգուտներ քաղել:

Գործոնների երկրորդ խմբի տեսանկյունից հասկանալի է, որ «Նոր աշխարհակարգում» ոչ միայն Հայ տեսակը, այլ նաև ցանկացած մեկ ուրիշ էթնոս, ոչ մի կերպ չի ներգծվում: Քանի որ միօրինակությունը բացառում է որևէ ազգային ինքնության առկայություն, առավել ևս՝ դրա իրացում: Արդյոք, սրանով չէ՞ պայմանավորված էթնիկ ինքնության զարթոնքը բոլոր ազգերի մոտ:

Խնդրի ճշգրիտ լուծումը պետք է խարսխված լինի գործող մեխանիզմների բացահայտման վրա:

Ինչպես վերը ասացինք, ձևավորված միջազգային համակարգը ելնում է գործոնների առաջին խմբից, որում պարբերաբար իր նպատակային շտկումներն է մտցնում: Ընդ որում, «շտկումների» տեխնոլոգիան աղերսված է միջազգային պայմանագրերի և իրավական նորմերի գերակայությանը, իսկ իրականացումը դիվանագիտական և այլ խողովակներով՝ այդ գերակայությամբ կիրառվող միջազգային սանկցիաներին (ասել է թե՛ բոլորի

անունից և հանուն ոչ մեկի):

Մյուս կողմից, կոմունիկացիոն և հատկապես ինֆորմացիոն տեխնոլոգիաների նվաճումներն օբյեկտիվորեն հանգեցրել են քաղաքակրթական գլոբալացման: Այսինքն՝ աշխարհը միանգամից «փոքրացել է» և ահագնացող տեմպերով էլ շարունակում է փոքրանալ: Այս գործընթացի էությունն այն է, որ այսօր աշխարհում գրեթե չկա մի հանրույթ, իսկ մոտ ապագայում՝ նաև անհատ, որը դուրս մնացած լինի քաղաքակրթական գլոբալ ինֆորմացիոն դաշտից: Դա, իր հերթին, հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի ներազդել ինֆորմացիոն դաշտի, հետևաբար նաև՝ քաղաքակրթական գործընթացների վրա:

Արդ, գլոբալ կտրվածքով, մեր կարծիքով, Հայաստանի համար նախընտրելի են գործնական քաղաքականության հետևյալ մարտավարական ուղղությունները՝

1. մնալով միջազգային իրավունքի ինքնիշխան և լիիրավ սուբյեկտ՝ պետք է միջազգային այս կամ այն պայմանագրերը ու նորմերը գնահատվեն ոչ միայն տնտեսական նպատակահարմարության, այլ նախ և առաջ ազգային ինքնության հարատևման տեսանկյունից,

2. հարկ է մշակել և կամ գոնե նախաձեռնել (ներգրավելով ողջ միջազգային հանրությանը) «Ճշմարիտ աշխարհակարգի» կոնցեպցիան, որը պետք է աստիճանաբար փոխարինի «Նոր աշխարհակարգին»: Առաջին մոտավորությամբ՝ այս կոնցեպցիայի հիմնախարիսխը պետք է հանդիսանա ներքին մեծ բազմազանությամբ օժտված, ինքնակառավարվող, և հետևաբար բազմաբևեռ աշխարհի մոդելը: Որպես միջոց, մեր կարծիքով, այս դեպքում «Մարդու իրավունքների» սկզբունքներին պետք է փոխարինելու գան հոգևոր արժեքներին աղերսված «համամարդկային բարոյականության» սկզբունքները,

3. պահպանելով անդամակցությունը միջազգային կազմակերպություններին՝ Հայաստանը պետք է ձգտի աստիճանաբար ստեղծել նոր կոնցեպցիայի շրջանակներում գործող միջազգային բնույթի կազմակերպություններ և տարածաշրջանային բլոկներ: Այստեղ հայկական գործոնի առաքելությունը երկակի է. նախ՝ հնդեվրոպական նախալեզվի բնօրրանի՝ որպես հայի բնական հայրենիքի առկայությունը մեզ պարտավորեցնում է հանդես գալ նախաձեռնողի դիրքերից՝ ձեռքի տակ ունենալով մեր մշակութային ողջ ժառանգությունը: Երկրորդ՝ հայկական գաղթօջախների դե-

որը այլ երկրների ազգային-մշակութային կյանքում պարտավորեցնում է մեզ պատասխանատվության բարձր զգացումով լցվել այդ երկրների բարօրության և բարգավաճման համար:

Վերադառնալով միջազգային նոր կառույցների ստեղծման խնդրին՝ հարկ է նշել, որ գործնական հարթության մեջ դրա վճռումը մեծապես կախված է նաև մեր տարածաշրջանում ուժերի բաշխվածությունից և Հայաստանի ընտրած արտաքին քաղաքական կուրսից:

## ՎԵՐՋԱԲԱՆ

«Իսկ մեր աշխարհը Հայկի  
 ամունով կոչվում է Հայք»:  
 Խորենացի, «Հայոց պատմություն», Գլ. ԺԱ (գիրք Ա)

Եվ Հայկը կրկնեց ուղին տապանի՝ Այրի արդար, որ և ուղին էր Դարձի:  
 Քանզի կրկնության սկիզբը մեկն էր՝ Փոքրը մեծի ներքո և, միաժամանակ,  
 մեծը՝ փոքրի:

Արդ, Կորդվա Արարադի ստորոտը թողնելով Արամանյակի որդուն՝ ին-  
 քը շարժվեց հյուսիս-արևմուտք առ Հարք՝ կենտրոնն Էրկրի և ամունն էլ  
 կոչեց Հարք:

Եվ Բելը, որ մարմնավորում էր չար ոգուն, կարող չէր ըմբռնելու ներ-  
 դաշնակ կարգն Արիական:

Արդ, ամբոխի գլուխ անցնելով՝ շարժվեց առ Արեալ Հարքի:

Եվ Հայկը իր գորքով բռնեց գետի աջ կողմը, զորքն էլ դասավորեց  
 եռանկյունաձև, քանզի ներդաշնակված էին իրենց մեջ և տեսակի մեջ առ  
 Արեալ: Իսկ Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը հանդուգն հար-  
 ձակունով ցիրուցան վազվզում էին Էրկրի երեսի վրա: Եվ սա այսպես է,  
 քանզի ապաներդաշնակված էին իրենց մեջ և տեսակի մեջ առ Արեալ ու  
 դադարել էին միմյանց հասկանալ:

Արդ, երբ արեզակը ամռան երկրորդ՝ Արաց ամսին գտնվում էր Կշեռք  
 կենդանակերպում, նույն ամսի Երեզկան օրը Տերական Հայկի լայնալիճ  
 աղեղից արձակված երեքթևյան նետը բևեռեց Բելին հող տարերքին:

ԷՈՒԹՅՈՒՆ		ԵՐԵՎՈՒՅԹ	
Էմանացիա	Սուբստանցիա	Պրոյեկցիա	Դրսևորում
Սերմ	Ինֆորմացիա	Մատերիա	Պտուղ
Ինդուկցիա	Տրանսցենդենտ	Իմանենտ	Դեդուկցիա
Աշխարհընկալում	Ենթագի- տակցություն	Գիտակցություն	Աշխարհայացք
Արժեքների համակարգ	Խմբային անգիտակցական	Հասարակական կարծիք	Ստերեոտիպ
Արժեքների համակարգ	Խմբային անգիտակցական	Հասարակական կարծիք	Ստերեոտիպ
Մշակույթ	Ազգ	Հասարակություն	Քաղաքակր- թություն
Ժամանակային մարմին	Ներքին պատմություն	Արտաքին պատմություն	Ժամանակագրու- թյուն
Ինքնակազմա- կերպման զգացում	Պետականություն	Պետություն	Քաղաքական կառույց
Էթիկա	Բարոյակա- նություն	Իրավունք	Իրավական նորմ
Իմաստություն	Արևելք	Արևմուտք	Իմացություն


Հավասարակշռող էներգիա  
 (Հյուսիս-Հարավ)

Աղյուսակ 1

հոգևոր

գաղափարական

նյութական




Հարատևություն

հոգևոր

գաղափարական

նյութական




Ժառանգունակություն

հոգևոր

գաղափարական


նյութական



Անվտանգություն

Գծապատկեր 1

### Ներդաշնակ պետության կառավարման մոդել



Գծապատկեր 2

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	3
ԳԼՈՒԽ 1 Հայոց պետականության եությունը	
§ 1.1 Պետականության ընկալման հայկական կերպը .....	6
§ 1.2 Պետականություն-Առաքելություն առնչությունը .....	8
ԳԼՈՒԽ 2 Հայկական պետության կայացման նախադրյալները	
§ 2.1 Պետությունը՝ որպես Պետականության նյութականացում .....	12
§ 2.2 Պետության կառուցվածքաբանությունը.....	15
ԳԼՈՒԽ 3 Պետական կառավարման համակարգի	
զարգացման հեռանկարներն ու առաջնահերթությունները .....	19
§3.1 Պետական կառավարման բնական օրենքներն ու օրինաչափությունները .....	20
§3.2 Պետական կառավարման ընդհանուր-համակարգային և մեթոդաբանական սկզբունքները .....	25
§3.3 Ներդաշնակ Պետական կառույցը և նրա կառավարման համակարգը.....	36
Եզրակացություններ .....	50
ՎԵՐՋԱԲԱՆ .....	71

## «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի մանաստիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գեոֆունդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

### **ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԻՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ**

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

#### **ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝**

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

#### **բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝**

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

#### **գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝**

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,

- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,

- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

#### **դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում**

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,

- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,

- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,

- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,

- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,

- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,

- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,

- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,

- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

#### **ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ**

#### **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

*«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝*

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,

- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,

- հայկական շարունակականության հայեցակարգը,

- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,

- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և



մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչունը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,

- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,

- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառնությունները,

- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,

- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,

- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

*«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.*

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

**Անդրանիկ Սարգսյան** - ՀՀ Վարչապետ

**Մանուկ Թոփուզյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

**Կարինե Կիրակոսյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի տեղակալ

**Լևոն Սկրտչյան** - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան** – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

**Արա Ավետիսյան** – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com